



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

374.2

L-85




ՀԱՐԱՆ - ԸՆԹԵՐԵԱՏՈՒՆ

ՀԱՐՑ- 

ՊԱՏԱՄԻԱՆՆԵՐ

Բ . ՀՐԱՏՎՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԾԻՂՄ

Քիչ մը գրականութիւն, ինչ մը
արականութիւն, ինչ մ' ալ ճպիտ .
Տ . Ա .



Handwritten signature

Գ Մ Հ Ի Ի Է

ԲՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԷ ԹՐԱՆՍԼԱՏ

1903

374.2
L-85

ԳԷՄԻՒ ԾԱՄԱԾՈՒՄ ՉԵՆԻ ՈՒՉԵՐ

— 0 —

Անոնիս որ կարող են բայց փառալերել չգիտեն, սիրո չունին ու գգաշուննին մարած է, բողիսանին « Հարց-Պատասխաններ » ը մեզի վերդարանել: փոսքի ծախար մեր վրայ, երբ պահանջուի:

Տայե առաջ մերժելու եղանակը ստրիկնի:

Մուրացիականներ են մեկ, բայց վեհանձն, աջկուշ մուրացիականներ:

ԳԷՄԻՒ ԾԱՄԱԾՈՒՄ ՉԵՆԻ ՈՒՉԵՐ:

« ԳԵՂՈՒՆԻ 1903 »

— 0 —

Չասկեն առաջ պիտի երեւայ 1903 ի « Գեղունի » ն, որուն ծաւալը գրեթե պիտի ըլլայ անյետաջ սարու շանին կըրկինը. շֆեղ պատկերներով եւ գրուքիւններով աւելի անոյ:

« Գեղունի » ն գրական եւ գեղարուեստական հոյակապ յիշատակարան մը պիտի ըլլայ. եւրոպական Illustration ներու հաւասարող:

« Գեղունի » ն գոյաշար մաքուր հասոյթին կեար պիտի յատկաւորի որբերուն:

« Գեղունի » ն ուրեւն յանձնարարուելու պիտի չունի:

ԳԵՂՈՒՆԻ (առանձին) ԲԱԶՄԱՎԷՊ-ԳԵՂՈՒՆԻ միասին 12 ֆր.

15 ֆր.

« Բազմակայ - Գեղունի » ի եզրագծուի համար գործակալն Տ. Սեդրակ Օսապուշեան

Boite Postale 244, Caire

314.5
4-85

ԼՍԱՐԱՆ - ԸՆԹԵՐՅԱՏՈՒՆ

ՀԱՐՑ -



ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

Բիջ մը գրականութիւն, ֆիլ մը
արտակարգութիւն, ֆիլ մ' ալ ժպիս:
Տ. Ա.

Գ Ա Հ Ի Ր Է

Բ. ԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԵԷ ԲՈՐՈՍԵԱՆԻ

1903

3 MAY 2013

52.723

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



4934
47



ԿԱՐԱՊԵՏ ԳԱՆՈՒՍ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մարդ մը եղաւ մարդերուն մէջ մեծագոյն .
 Ազգին սիրով վառ սիրել համալ հրդեհած .
 Այն մարդերէն որոնց ճակատն վեհ Աստուած
 Շաղի կարով մը օծեր է իր հոգւոյն :

Մարդ մը անկեղ հաւասարիւ սուրբ մքոս .
 Ռոռն կացուածքն , արծուոյ աջիկն պէս փուփոկ .
 Կը սեւեռեր անբարբ ասեղոց լուսաշող .
 Եւ որ բարձանց կը շնչեր օդ շիւթոք :

Մարդ մը որուն շանց շայնասուր անվեհեր ,
 Կը բարասիւր անշուշտ յեռանդ հայրենեաց .
 Եւ կը բաղձար իր ետխանձով սիրազգեաց
 Որ մեծ , շատ մեծ եւ երջանիկ այն շիներ :

Որ քե սպրեւ մեր օրերուն մէջ երբեք
 Եւ ա յե՛սքի այս անասնունան վիճեակեր .
 Շանքերու պէս պիտի գուար դրդորդեր
 Երկինք գեթ իր մորմոխի մէջ վրսեւ :

Մեծ բարեկամ եղաւ մանկւոյն իր ցեղին .
 Եւ հայելով յապագային հեռասանն .
 Կստոյց անոնց համար շուտ վառարան ,
 Ուսման ջանքը՝ քօրափելով ի ձեռին :

Հայոց մանկունք կ'օրհնեն անունն յարիսեան .
 Երասագե՛տ շողով յեզուն աջ իրեանց .
 Եւ անաստոյ ժախնակիկն , է անանց
 Յիշատակը Կարապետի Դաշուսեան :

Յ . Ս .



ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԱՌԹԻՎ

Հ Ա Կ Ա Պ Ա Տ Կ Ե Ր

—Աստուած չաս աարիներու ուրախութեամբ հասցունէ . . . :

—Շէն ըլլանք, ուրախ ըլլանք, շատ երջանիկ օրե՛ր . . . :

—Տնով տեղով, հողար բարիքով շէն ըլլաք . . . :

Հակառակ ձիւնաբեր փոթորիկին որ դուրսը կու- նար կը չլէր, հակառակ խտաշունչ ձմեռուան որ իր բարկ սառած գնդիկներուն անպարագիծ խարբալոււմը շէնին կամ աւանին կամ քաղաքին ընդարձակութեան վրայ կը թօթափէր՝ անշարժութեան եւ լուռութեան պա- տանքի մը տակ թաղելով բովանդակ սքրամուտ ծա- կախիթ բնակչութիւնը, սփոփանքի, խրախոյճի, ցնծութեան այդ ձայնարկութիւնները կ'արձակէին մեծ մասամբ նահապետական այն յարկերուն տակ՝ հանի, թոռ, պապ, հարսն ու փեսայ, հայրն ու մայր, ընդոճինք ու ամոխախք, եւ ծառայք ու աղախնայք, առհասարակ խնդութեան արբեցութեամբ պատարուն, այրերուն նայուածքը անոյշ գինիին հրազօր բաբա- սանովը եւ կիներուն երեսն ու ճակատը աննման գո- բովի, խնծիդի եւ յուզմունքի կարմիրովը վառվռուն

ևւ ըստօրաներկ լուսազգեաց , երբ կ'ողջուենէին ամանորը :

Ամանո՛րը , յուսոյ , սպազայ առատագոյն բարեաց , նորոգ սերունդի մը բերկրատիթ ծաղուծին , զարգացումին տեսլարան , ամանո՛րը , վարդ օրը ծաղիկ օրերուն մէջ : ամանո՛րը , հինաւուրց նաւասարդը , սպիտակ աղաւնիներու ձիւնաթոյր թեւերուն թարթափումին հով ու անոյշ թուականը , երկիրքի սպիտակութեանէն վար ինկած , Աստուծոյ օրհնութիւններովը ցօղազուարճ :

Ու հանիները գլխու երկրումներ ունէին , ողբական կերպով մխիթար՝ այդ ցնծութեան մէջտեղ , գլխու երկրումներ որ յաւիտեան մեկնած զատակ մը կամ թու մը կ'աւաղէին , ու պապերը քաջութեան և առաքինութեան մանրալէպներ՝ շրթունքներուն վըրայ , ու փեսաները ու հօրաները ու թոռները՝ հիացիկ նայուածքներ՝ յակճիւս կալով , այդ հերոսային պատմութիւնները յիշողին շուրջը բոլորածիր :

Եսպիսի էին , զեռ քանի մը տարի առաջ , ողջոյններն ամանորին , մաղթանքները նորոգ թուականին , սրտաթունդ ևւ ալնկալու՝ ինչպէս ճանապարհորդ մը որ , երկրէ մը մեկնելով , նոր երկրի մը սահմանին վրայ հասած , կը նայի իր առջև , յուսալից նորանոր առարկաներ տեսնելու , նոր սնոր վաշելումներ ունենալու նիւթական կամ հոգեկան :

Եւ հիմա , թէպէտ կան թերեւս ասկաւին ուրախութեան ևւ յուսոյ նշխարներ մնացած աստ անդ ցիրոցան , սակայն ասանակ հազարներով կը համբուին նաև մեզի արևնակից թշուառներ , ստանա .

ղէն ու մոայլ երկիրքի մը տակ հեծեծագին , դուռնէ դուռ կտոր մը հող մուրալով , որուն վրայ կարենան շնչել , շնչել արևը որ ամենունն է , շնչելօղ որ հասարակաց է , եղուկ էակներ , անբաւ հիքութեան արհաւիրքը նայուածքներուն մէջ , ցուրտէն ծեծուած , անօթութեանէ չարչարուած , անյուսութեանէ լլկուած , տկար վտիտ հիւծած մանուկներու ձեռքէն բռնած , որոնք չեն հասկնար բան մը այս ամենէն , ևւ որոնց անոնլի երազ մը կը թուի այդ գոյութիւնը որ ծնած օրերնուն իսկ սկսեալ իրենց բաժինն եղաւ , աւա՛ղ :

Այդ չուառներուն համար նոր տարին սարսըռազղեցիկ սահմանազլուխ մըն է կրկին սոսկումներու , անցեալին սոսկումը որ արիւնոտ է ևւ կսկծագին , ու սպազային արհաւիրքը որ լի է անգոհական հնարաւորութիւններով ևւ քստմնեցուցիչ հուանակաւնութիւններով :

Մա՛հ ևւ լքում . լքում ևւ մահ :

Անոնց համար ամանորը ամենօրեայ տուայտանքներու շարքի մը առաջին հանգրուանն է , առաջին ցուրտ օղակը անոնլի է շղթայի մը որուն կապուած է հալածուած , խայտառակուած , քստմնելի քրէիքութի իրենց էութիւնը :

Ո՛վ ցաւ :

Եւ դուն թոյլ կուտաս , ո՛վ Տէր , որ այս բաները կատարուին : Եւ այդ պիտի ներեա որ ամէն բան բնենք որպէսզի թոյլ չ'տանք մենք որ կատարուին անոնք :

Յ . ՍԵԹԵԼԼՆ

1903

ԱՌԱՋԻՆԸ ԵՒ ՎԵՐՋԻՆԸ

Այն պահուն երբ մեր մահկանացու կեանքի շրջանէն տարի մ'եւս բոլորելու գոթախտութիւնը կ'ունենանք ու ներկայ հրատարակութիւնը մամուլը կը յանձնենք՝ իբր կաշանդէք մեր համակիր բարեկամներուն ձօնուած, Լսարան-Ընթերցարան Ընկերութեան Գործադիր Վարչութիւնը, նորածիլ գրական մասնաճիւղն մանաւանդ, հաճելի ու միանգամայն նուիրական պարտականութիւն մ'ունեցած ըլլալ կը կարծէ. այն է՝ գլուխնիս խնարհած մեր երախտագիտութիւնը յայտնել հիմնադիրներէն անոնց՝ որոնք անշահախնդրութեամբ և առանց փառիսեցիական ժողովրդասիրութեան՝ ամէն նիւթական, բարոյական թէ մտաւորական զոհողութիւններ ըրած են այսպիսի ազգաշէն ու գերազանցապէս յառաջդիմաւոր հաստատութեան մը օգտին համար .

Ու կը փութանք հրապարակաւ մեր ակնածալիք շնորհակալութիւնը յայտնել նմանապէս Վեհ. Հայրիկին՝ այն օրհնութեան գորովալիք կոնդակին համար, որով Ն. Ս. Օծութիւնը հաճած է պատուել ու քաջալերել ընկերութիւնս իր մանուկ օրերուն մէջ իսկ, ինչպէս և Ն. Բ. Գուլիտոն Իշխանի, որ տասնեակ մը կարևոր գրքեր նուիրած է ընթերցարանիս, անցեալին մէջ .

Շնորհակալութիւն այն ազնիւ ու բարեսէր ազգայիններուն որոնց ինքնաբուխ նուիրատուութեամբ կրցինք՝ անցեալ տարի՝ ընթերցարանի բացումը փութացնել .

Շնորհակալութիւն Ընկերութեանս բոլոր անդամներուն ու համակիրներուն, որոնց նիւթական թէ բարոյական օժանդակութեամբ Ընկերութիւնս իր պատանեկութեան հասած է, ու քայլ մ'եւս, խոստմնալից և փայլուն ապագայ մը պիտի խոստանայ .

Շնորհակալութիւն մեր համակրելի թղթակիցներուն՝ իրենց շահեկան գրութիւններուն համար որ կազմած են ներկայ հաստատարակութեան ստաղձը, իր տեսակին մէջ թերևս նոր ու նպատակայարմար, ի պատասխանի հետեւեալ շրջաբերական-նամակին՝ զոր ուղղած

էինք առհասարակ ամէն աջի զարեոյ ընթերցասէր կամ ընկերասէր ազգայիններու :

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ

Ազնիւ եւ սիրելի պարոն :

Կ'ընդունիք անշուշտ քե՛ր մտրդ մը անպատեան ուսեալ կամ զարգացած ըլլալու չե՛, հասկնալու համար Լսարան-Ընթերցարանի մը պէտքը որ եւ օտարաբնակ հաւայնիքի բով, մանաւանդ Եգիպտոսի մէջ :

Ռաւիկի մարդիկներ անշատ զգացած են անոր կարեւորութիւնը :

Փափաքելով սակայն, յաղայարներու հաճելի ընդհարումով ու գրական ոճի պէտքաւորութեան մը, աւելի գործնականօրէն ներելի ոճքով մ'ընել զիսցում ճշմարտութեան, կը խնդրուի որ՝ դուք ալ, իբր ժողովրդասէր մտրդ եւ ընկերութեան գեր նպասակին հաւակիր, հաճիք ձեր կարգին պատասխանել հետեւեալ չորս հարցումներուն :

1. Պե՞տք է որ եգիպտացիներու անպատեան Լսարան-Ընթերցարան մ'ունենանք :

2. Անորմէ առաջ եկած օգուտները, բարոյական քե՛ս ազգային :

3. Ինչո՞ւ այս նպատակն է գործ դրուած ջանքեր բաղձացում արդիւնք ունեցած չեն :

4. Ի՞նչ աւելին կը սպասուի Կարչուքիւնէս, եւ ի՞նչ ընելու է ժողովուրդը՝ ինք :

Ձեր պատասխանը, ուրիշ գրասէր ազգայիններու պատասխաններուն հետ անխորտակ, մասնաւոր գրքոյկով մը պիտի հրատարակուի առաջիկայ ամսուորի ստորի :

Ի դիմաց ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
« Գրական Մասնագիտ »
Ս . ՕՏԱՊՍՇԵՆ

Վերջապէս շնորհակալութիւններու է՛ն սրբատաղինը, ամենէն բանաստեղծականը չ'ըսելու համար, այն՝ փաղաքական գովեստներու ու խրատոյցի հոսանքին փոխարէն որ ալ ու ձախ, հեռու էն թէ մօտէն, բողմաթիւ ընթերցասէր ազգայիններու կողմէ կուգայ ընթերցատան Վարչութեան ու մասնաւորապէս՝ այս տողերը դրօշին հասցէին. գովեստներ որոնց անարժան

ենք արգարե , շուարած կը մնանք անոնց հան-
դէպ , բայց չենք կրնար անտարբերութեամբ ալ
վերաբերուիլ : Անոնք գրգիւ մը թող ըլլան
ուրեմն մեզի , ընելու համար ինչ որ Աստուած
կամ չենք կրնար ընել , և որչափ որ մեր միջոց-
ները և մեր շատ նիհար կարողութիւնը մեզի
ներեն :

Եգիպտահայերուս արժանավայել կեդրո-
նավայր մ'ունենալու համար մեր երկարամեայ
ձգտումները ինքնին պերճախօս ապացոյցը ըլլա-
լով մեր տեսութիւններուն , ու մանաւանդ ի
նկատի ունենալով « Հարց — Պատասխաններ » ու
սահմանափակ ծաւալը , պիտի թողունք որ մեր
յարգելի թղթակիցները իրենք ըսեն , թէ ինչո՞ւ
Լսարան-Ընթերցարանի մը պէտքը , թէպէտ
գիտցուած ճշմարտութիւն մը տեսականին մէջ
բայց գործնականին մէջ՝ խիստ անտեսուած ,
գժբախտաբար :

Իրաւ է թէ ընթերցատուն մ'ունինք այսօր ,
որը միայն որքան հեռի է պատուաբեր ըլլալէ
մեր գաղութին համար , իր բոլոր նիւթական
թէ բարոյական առաւելութիւններով : Եւ այս
երկրորդ տարին չէ որ ընթերցատուն մ'ունեցած

ենք , անպաճօյճ և աննախանձելի : Մօտաւորա-
պէս տասներկու տարիներէ ի վեր այս նպատա-
կաւ ջանքեր ընաւ պակաս չեն , որոնք եթէ
միշտ յարատեւաբար արդիւնաբեր եղած չեն ,
պատճառը ուրիշ բան չէ բայց եթէ՞ մեր ստրուկ
ազգի տհաս զարգացումը , ինչպէս և՛ ընկերու-
թիւններ կազմելու կարծես ժառանգական դար-
ձած մեր զգուելի անընդունակութիւնը : Լոս-
րան-Ընթերցարանէն առաջ ունեցանք տիրա-
հռչակ ճիւղերցատիրաց Ընկերութիւնը , Քլիպը ,
որ ծնունդ առաւ հայերուս տարամերժօրէն յա-
տուկ պայմանագրական յանկերդով , նախ տաք
եռանդով , յետոյ սնամէջ բանակաւումով , աթո-
ւամարտով ալ եթէ կ'ուզէք : 1896էն սկսեալ՝
երեք տարույ մօտ՝ փայլուն շրջան մը բոլորեց
և վերջ ի վերջոյ մեռաւ , զոհուեցաւ մեր ան-
համաձայնութեան կամ չար նախանձին , ան-
տարբերութեան կամ մեր արձարանանոյու-
րեան : ու այսօր է որ իրենք զիրենք ժողովրդ-
դական յորջորջող անփորձ ու անհեռատես մար-
դիկներ կոկորդիլոսի արցունքներ կը թափեն
անոր աւլած մաքրուած վլատակին վրայ , ա-
ւա՞ր . . . : Քլիպի զոյքերը քանի մ'ամիս առաջ
աճուրդի դրուեցան , բայց բարեբախտաբար մե-
ծաքանակ ու փառակազմ դրքերը դեռ կը մնան ,

բանտարկուած տեղւոյս Ազգ. Առաջնորդարանին մէջ՝ չես գիտեր ի՞նչ բանի ծառայելու համար, մինչդեռ ասդին խեղճ ընթերցարաննիս անհրաժեշտ պէտք ունի այդ գրքերուն:

Մտածել թէ այս այն Առաջնորդարանն է, որ մեր միակ հոյքը, միակ գլուխը պիտի ըլլայ, մեզ լոյսի և յառաջգիտութեան ճամբան առաջնորդողը. ի՞նչ հեղինութիւն, Աստուած Անձ...

Ասորան-Ընթերցատունը, Քլիպի յաջորդը, բիչ մ'աւելի ժողովրդական, գրեթէ ամէն հայ ընկերութիւններուն նման, փոթորկալից անցեալ մ'ունեցաւ, ոչնէ թուրաւորութները, ողորմելի և ողորմուկ արարածներ, շուտ խրտչեցան և ուխտեցին բոլորովին հրապարակէն քաշուիլ: Բայց այսօր կարող ենք պարծենալով ըսել թէ, շնորհիւ ասի մը անձնուէր երիտասարդներու աննուած ճիգերուն, ընթերցատուն մ'ունենալու համար ամենէն յամառ յառեռները սկսած են հասկնալ իրենց սխալը, ու ետ առնել իրենց անգաւառալի ուխտը: Ինչ որ ալ ըլլան վարանցուկ անյաջողութիւններ, խօչնդատներ, յաղթանակը՝ միշտ ա-

պահով իր կողմն է, որովհետեւ վսեմ է լսարան-ընթերցարանի մը նպատակը: Արեւելեան այն ազգերը՝ որ չեն կրցած կամ չեն ուզած հասկնալ այս կարգի յառաջգիտական հաստատութիւններու պէտքը, կա հոց կամաց անհետան լուկամ իրենցմէ աւելի արթունին մէջ ճուշտելու գառապարտուած են, եթէ չ'գտնուին անոնց մէջ զարգացած մտքեր, անձնուէր հոգիներ, ճշմարիտ հայրենասէրներ:

Ազգառախնամ կամ սրբախնամ ընկերութիւններ, նուագածուաց խուփաւքն. չեն կազմեր ազգի մը մեծ փառքերը, չեն ապահովեր անոր մշտնջակ ան գոյութիւնը: Ծուռ կը մարն՝ մանուանդ օտար հոգի վրայ՝ հայրենասիրական զգացումը, եղբայրակցական դարտածանաչութիւնը երբ կը պակսին վարժարաններ, կը պակսի ժողովրդային ինքնազարգացման վառարանը, ընկերութիւններու թաղուհին, ազգութեան ռահիլիան, լսարան-ընթերցարանը:

Վերջ տանք մեր անտարբերութեան, ու, հաւերաչխ սպով մը, փարինք այս ազգաչէն գործին: Ալ հերիք է որ սրճարաններու մղչուած մթնոլորտին տակ փնտուեցինք մեր հաճոյքի ժամանցը: Կառավարութիւն չունինք, գլուխ չունինք. խեղճ երամակ մ'ենք քայլամու-

ըր որչաարնեբու, առանց արթուն հովիւի, ձգուած մեր բախտին: Ինչի մենք մեղմով ամփոփուիլ գիտնանք, կուուելու համար ահա ելի վտանգին դէմ՝ որ Գամկլէսի սուրին նման՝ ցցուած է, անգութ ու ճիւղ, մեր թշուառ ազգին գլխուն վերև:


Ինչ վերջերս, յօդուածագիր պարոն մը, Վահիբեցիոն, Արշալոյսի մէջ իր ուղեւորական տպաւորութիւններով կրեացիները մեզի կը հերկայացնէր իբր տգէտ ու մոլեռանդ ժողովուրդ մը: Որչա՞մի մեծ եղաւ սակայն մեր զարմանքը, երբ Կանտիաի մէջ երկաշ տարիներէ ի վեր հաստատուած գտանք թրքական ընթերցաւիյր մը, 2-3 հազար ամէն կարգի յունարէն, ֆրանսերէն և տաճկերէն գրքեր պարունակող ճոխ թանգարանով մը: Բազմատեցէք հիմա կրեւտէի թուրքը եգիպտահայերուս հետ, որ դեռ զարգացած ժողովուրդի մը հովեր առնելու չափ ծիծաղելի կը դառնանք:

Այս տողերը մեր կողմէն բաւական համարելով ուրեմն, թող ներքեւ մեզ երկու խօսք ալ ընել ընկերութեանս այս Բ. հրատարակու-

թեան մասին, զոր իբր դրական գլուխ-գործոյ մը ներկայացնելու յաւակնութիւնը չունինք: Մեր միակ նպատակը եղած է՝ այսօր՝ կարող փորձառու կամ ժողովրդատէր գրիչներէն օգտուիլ, ռեֆրան մ'ընել ընկերութեանս, հաճոյալի կեդրոնավայր մ'ունենալու դաշտաբար տարածելով ժողովրդային ամէն խաւերուն մէջ:

Գրական մասնաճիւղիս, որ այսօր կը բազկանայ հինգ ձեռնհաս անձնաւորութիւններէ, գործը պիտի ըլլայ այսուհետեւ լսարաններով և պարբերական հրատարակութիւններով զբաղիլ, միութեան կապ մը ստեղծել գաղութիս ընթերցասէր ազգայիններուն միջեւ, դրական մրցանակ հաստատել, օգնել գրչի կարօտ վաստակաւորներուն: Գրգելով մեր երիտասարդութիւնը որ իր թանկագին ժամերը լաւագոյն բանի մը գործածէ:

Օգտակարին փարած ըլլալով՝ չուզեցինք անտեսել հաճելին: Առանց շլացած ըլլալու տարբեր դասակարգերու արտաքին փայլէն, մեր երեք պատկերները առնուած են համեմատ ու նպատակայարմար անձերէ, որոնք իրենց բարեգործութեան, դրական կամ գեղարուեստական անժխտելի արժանիքին միացուցած են բարի, անաղարտ ու սիրուած անուն մը:



1. Վասպուրականցի հողելոյս կարապետ ազա Գալստեան, Գահիրէի ազգային վարժարանի երջանկայիշատակ Հիմնադիր-Բարերարը, որուն կենսագրութեան շահեկան մասերը կ'արտատպենք քիչ մը վարը:

2. Յովհաննէս Սեթեան, նոյն վարժարանի յարգելի ու համակրելի տնօրէնը, ծանօթ հին գէմք մը գրական աշխարհին մէջ:

3. Երուանդ Տէմիրճեան, երիտասարդ տաղանդաւոր նկարիչը, որուն գեղեցկահիւս մէկ գրութիւնը, « Գեղարուեստի Գերը », Ընկերութեանս կողմէ արդէն հրատարակուած, միշտ ու միշտ պիտի կարգացուի միեւնոյն անփոփոխ հաճոյքով ու հիացումով: Ու իր գեղարուեստական արժանիքին մասին գաղտնիք մը տալու համար՝ հոս կ'արձանագրենք գնահատումի այն տողերը, զոր երկու տարի առաջ տեղական երկու անալիտիկարդ ֆուանսերէն թերթեր նուիրած են իրեն, նկարչական մրցանակաբաշխութեան մը առիթով:

« De tous les exposants que le Caire inspire, aucun, plus que M. Démirgian, ne rend plus justement la léproserie lumineuse des murs croulants de nos vieilles mosquées, la tristesse des pierres polyeromes mordues



par l'herbe et les moisissures.

Ajoutons que certains morceaux sont supérieurement traités; telle la rosace polygonale qui d'un pan ombré émerge en plein soleil. » (Journal du Caire)

« Signalons encore quelques tableaux devant lesquels on s'arrête avec plaisir. Le « Fakir et La Halte » servent à M. Démirgian de prétexte pour d'admirables peintures de porcelaines orientales. » (Le Progrès)

* * *

Եթէ ուրեմն մեր սոյն համեստ ձեռնարկը, մեր զոհողութիւնները՝ թէպէտ աննշան, մեր պատուաւոր մուրացկանութիւնը և մեր քրտնաթոր ջանքերը լոկ ժողովրդին օգտին համար գնահատուելու արժանի են ժողովուրդէն, մի՛ զլանաք, ազգին սիրուն, ժողովուրդին սիրուն, ձեր անգամակցութիւնը և ձեր լուսման, սիրելի հայրենակիցներ: Ձեռք ուղեր բեռ ըլլալ ձեր վրայ: Տուէ՛ք ինչ որ կ'ուզէք, ըրէ՛ք ինչ որ կրնաք, որովհետեւ ըրած ու տուած պիտի ըլլաք ձեզի համար: Մի՛ թողուք որ օր մը - անիծեա՛լ ըլլայ այդ սեւ օրը - մենք ալ իրա-

ւունք ունենանք, ալ վնասած, ալ սեփաս-
պառ, գոչելու Պոնտացի Պիղատոսին հետ. Ա-
րիւն ձեր ի գլուխ ձեր»:

Մտածեցէք թէ այս զոտ յառաջդի-
մասէր ընկերութիւնը, իր տեսակին մէջ պաշ-
տելի, առաջինը և վերջինը պիտի ըլլայ երկար
ատենուան մը հաւար, մինչեւ որ նոր սերունդ
մը յաջորդէ այսօրուանին, և թէ երբէք այս
ընթացքով յաջորդող սերունդը փարսանեան
երկրին արժանի բնակչու թիւնը կազմելու կոչուած
չէ: Խեղճ եգիպտահայեր...:

Առաջինը և վերջինը ահա խոնարհ վճիռ
մը, որ պէտք է սակի կամ սեւ տառերով արձա-
նագրուած ըլլայ եգիպտահայ տարեգրութեանց
մէջ:

Գահիրէ 1902/19 Դեկտ.

Ս. Օ

Կ Ա Ր Ա Պ Ե Տ Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Կարապետ Գալուստի վասպուրական աշխարհի
Վան ֆապիէն էր: Իր բնական իրեն անունն էր
Հանմեան կամ Հանմ օղլու. հայրը ֆահաւանայ
էր և կը կոչուէր Տէր Գալուստ:

* Մանուկն Կարապետ ժիր էր անձնեայ, օժ-
տուած էր արտի և մտքի ազնիւ յասկուրթիւններով:

Կարապետ կարողին կը սիրէր իր ծնողքն,
ևնր հարսն ու հայրենիքն. բայց շատ լանցած,
և իրական պատկաններով, կ'սխալուի բաժնուիչ
իր սիրելիներէն և իր գործի մարդու բնագործէն
ու ձիրքերէն քեշարեայ կողայ, կը հաստա-
նի ի Գահիրէ, ուր շատ առաջ կ'երթայ եգիպ-
տական կառավարութեան գործին մէջ:

* Կարապետ Գալուստ ֆանի բարձրակարգ, այն-
ֆան կը մտնար ազգին: Անդամ էր հայ առա-
գածողովին: Ազգային բոլոր հաստատութեանց
մէջ, Կարապետ Գալուստի արտին ամենէն մօտիկը
վարժարանն էր:

* Գահիրէի Տարպիչ-Կիլեկնախ մէջ երուսա-
ղիմի Ս. Յակոբայ վանքին սեպհական ղնդար-
ձակ տուն մը կար, որ առանց ուրեք դժուարու-
թեան Գալուստեանի տրամադրութեան սակ կը դրուի՝
կառուցանելու իր մտադրած կրթական շէնքը,
որ կ'սկսի և կը վերջանայ 1854 ին, 20,000
Էրակի ծախսով:

—1854 ին էր որ Գալուստ-Եղիազարեան Իյ
Մարարիաի ղնկերութիւնը շոժուեցաւ, բողոքով
իբր կէս միլիոն Էրակի հաշիւ մը, առարկայ
վեճի:

* Կարապետ Գաշուս վարժարանի նխարանը
 շենքը բարձրացնելից շետոյ, կը մտածէ անոր
 բարոյական շենքի հասիւն, եւ ազգային դաս-
 սիարակութեան խնդիրն գեթ իր մահէն ետքը
 հիմնապէս յոճուելոյ համար՝ իշխանաւթայեղ
 առասանեոնութեանը կտակագիր (*) մը կ'ընէ եւ
 անով ի մէջ աշոց իր շինած վարժարանին կա-
 րելոր կաշուածներ կը նուիրէ, ինչպէս եւ եկե-
 ղեցոյ եւ աղբասներուն . եւրն :

* 1864 Ապրիլ 8/20 ի գիշերը յսկիարժական
 մահուանը կը վսխմանի, իր Պիր-Հոննուսի
 քնակարանին մէջ, քնդիւսնոր սուգ եւ վիշտ
 պատճառելով ա կողջ ժողովուրդին, առանց
 խտրութեան ցեղի եւ կրօնի :

Օրհնեալ ըլլայ յիշատակն ամեն անոնց որ
 ստացումսներուն տէր կ'ընեն իրենց ազգն . երիցս
 եւ յաւիտ օրհնեալ յիշատակն ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱ.
 ԳԱՆՈՒՍԻ :

(«Նոր-Օր». Տես թիւ 34, 35, 36.)

(*) Այդ կտակագրի արամազութեամբ՝ Գալըս-
 տեան վարժարանին տարիներէ ի վեր յատկացուած
 է հարիւր ոսկւոյ մօտ ամսական ապահով եկամուտ մը .
 ապահով որ խեղճ բարեբաբը իր գեղնորակ ցօրեանը
 առասօլէն ցոյնած է ան արդաւանդ հողի մը վրայ :

(Մանօթ . Գրական Մասնաձիւղին)

ՊԱՏԱՍԻՍՆԵՐ

Ա .

Մերունի բանաստեղծ Սիմոն Ֆէլէկեան, կար-
 ձեւ մեր կարգ մը եռապաշտ ու ինքնահատան գրող-
 ներու ձեռնպահութիւնը լռելեայն պարտաւելու բը-
 նազգով, մեզի զրկած է հետեւեալ ոտանաւորով զը-
 րու թիւնը, որով ալեզարգ Ֆէլէկեան՝ իր վերջալոյսի
 դողով քնարին վրայ՝ կ'երգէ հայրենանուէր սրտի
 մը բոլոր վշտամորմօք իզձերը :

Կարճեցեալ զարգացածներու լէզէն մ'ունինք
 այսօր, որոնք միացած Ֆէլէկեանի մը քով նիւրի մը
 չեն արժեր :

Թմբած յուսահատ հայեր թող լսեն թէ ի'նչ
 կ'ըսէ մեր ձերունի նահապետը :

Ազնիւ պարոն,

Ձեր 1902 Նոյ, 17 թուակիր հրաւերն ստացայ
 որով կը հարկագրէիք զիս Լսարան-Ընթերցատան
 մասին ունեցած համոզումս յայտնել :

Ուրախ եմ որ բարեհաճեր էք զիս այս հրաւե-

բով՝ յարգել եւ զիս պարտաւորել առ այս ունեցած համոզումն յայտնելու :

Ճշմարտութիւն մ'է թէ երբ խօսք մը քիչով կը հասկցուի , չազակրատութիւն մ'է ընթերցողը պատի պատ բացատրութեամբ ձանձրացնել . ուստի յարգելով ձեր ազդեցութեան հրաւերը , հետեւեալ մի քանի տողերը կը նուիրեմ Պատ . Վարչութեան :

- Այն ազգ որ չ'ունի , ոչ ընթերցարան եւ ոչ շարան .
- Այն ազգ որ չ'ունի , ոչ խորհրդարան ոչ ժողովարան .
- Այն ազգ որ չ'ունի սեր կա՛ն զգացնել իւրոյ ազգութեան .
- Այն ազգ որ չ'ունի եղբայր եղբոր հետ հոգի միտքեան ,
- Այնպիսին կ'սպրի ազգ անունի սակ հոգի անկեղեցի :
- Մաղթեմ որ ըրայ ձեր այս փրկարար ձեռնարկ ազգային
- Որ կուզայ նորոգ մեզ ուղի բանալ , ուղի նոր կեանքին :
- Ով որ շատ ունի՝ պէ՛տ է նուիրի , այս եւս սուրբ պատիք .

Ասով կը շինուին ազգ , եկեղեցիք , կրօնք , հայրենիք :

Ազգին հիմնաքարն հաստատուն է միշտ . քեզայն պիտի բռնե՛ք ,

Կ'օրհնե՛ք ապագան ձեզ ու ձեր սերունդ . քեզանկէ՛ր իսկ էք :

Որ , դուք մեռեալին այսպէս ներշնչե՛ք , հոգի կենսաբեր ,

Այս պիտի ըրայ ձեր փառքն ու պատիւ հայրենեաց աւեր :

ՍԻՄՈՆ ՖԷԼԷԿԵԱՆ

* * *

Պիտի թողո՞ւս , արդար երկի՛ն , որ Սիմէոն ծերունի մըն ալ հաստատելով իր կարօտակէզ աչերը փակէ լոյսին , առանց կ'սրենալ ողջունելու իր մարտիրոս հայրենիքին արեւի ու փառքի աղօտ արշալոյսը :

Պիտի մեռնի՛ս . . . , պիտի՞ չը ստանես . խեղճ Ֆելէկեան :

U . O

Բ . Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն



Ազնիւ բարեկամ ,

Չօրս հարգումներ պարունակող չբջարեակաւն նամակ մը խրկած էք ինձ , որուն կը փութամ պատասխանել :

Նախ կը հարցնէք .

1 . Պէ՞տք է որ եզրկատհայերս անպատճառ խաղան-Բնթերցատուն մը ունենանք . եւ .

2 . Անոնցմէ առաջ եկած օգուտները , բարոյական թէ ազգային :

Ժողովրդեան հասկացողութեան , ըսեմ մեծամասնութեանը , համար դժուարին է շատ մը թերթերու եւ պարբերականներու բաժանորդ գրուելը . դժուարին է իրեն համար մտքի մեծ աշխատանքներու արտադրութիւնները հնչիւն դրամով ձեռք ձգելը . միմիայն ընթերցասունն է՝ որ փոքրիկ բաժնեգէնի մը փոխարէն , այն ալ կամաւոր , կուտայ ընթերցման ամէն դիւրութիւններ . կ'ունենաս ընթերցման սրահ մը , կ'ունենաս առձեռնպատրաստ գրքեր եւ թերթեր :

Լսարանը ընթերցատան մէկ լրացուցիչ մասը

կարելի է համարել . մին՝ թերի է առանց միւսին , մին միւսով է կատարել :

Լսարան-Բնթերցատունը Մայր Հայրենիքի մէջ պէտք մ'է . այդ պէտքը ա'լ աւելի կը շեշտուի արտասահմանի մէջ . եւ ասի շատ պարզ է . Հայաստանի՝ ինչպէս նաեւ Թուրքիոյ հայաբնակ գաւառաց մէջ , հակառակ ամէն ճնշումներու , հայը՝ նոյն իսկ անտարբեր հայը՝ բաւական զօրաւոր կապերով կապուած է երկրին հետ եւ կը մնայ հայ . հո'ն իւրաքանչիւր քայլին կը հանդիպի կա'մ հինաւուրց եկեղեցիի մը . կա'մ վանքի մը , կամ հին պալատներու փլատակներուն՝ որք բաւական պերճախօս վկաները կրնան համարուիլ ժողովուրդին անցեալ դարերու մէջ ունեցած քաղաքակրթութեանը . այդ աւեր մնացորդները կը դրոշմուին իր մտքին մէջ անտիական տարիքէն . կը լսէ իր պսակունն դիւցազներգական հէքեաթները : Այդ կիսակործան յիշատակարանները , այդ նուիրական նշխարները , այդ հէքեաթները՝ որք հետու օրերէ կուգան կը հասնին , կը քանդակուին անջինջ՝ հայուն մտքին վրայ իր տղայ օրերէն . ասոնց վրայ աւելցուցէք սա առաւելութիւնն ալ թէ՛ հոն հայը շրջապատուած է իր համախօս եւ համարիւն եզբայրներէն :

Մինչդեռ այս այսպէս է Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ , միջավայրը տարբեր կը գտնենք արտասահմանի մէջ . արեւմուտքի մէջ խօսելու եւ գրելու ազատութիւնը կը վայելինք , ստոյգ է . բայց նոյնքան ստոյգ է եւ պէտք չ'է անտեսել սա պարագան թէ՛ զարգացեալ միջավայր մը միշտ իր մէջ կուլ կուտայ ,

իր մէջ կը ձուլէ իրմէ նուազ զարգացեալ գաղութները: Հայը արաստանմանի մէջ հեռու կը գտնուի իր հայրենի յիշատակներէն, իր շուրջը խօսուածը օտար լեզուներ են, եւ ասոնց վրայ աւելցուցէք սասցաւալի կէտն ալ թէ՛ հայը աւելի փութկոտութիւն ցոյց կուտայ ձուլուելու, տեսակ մը աշխարհաքաղաքացի դառնալու: Վերջապէս օտար երկրի մը մէջ, լինի ան միապետական կամ հանրապետական, հոսանք մը կայ, գերիշխան տարրին հոսանքը՝ ուսկից քշուիլ տարուելու երկիւղը կայ ու կը մնայ: Եւ Եգիպտոս հայերս այս ընդհանուր կանոնին մէկ բացառութիւնը չենք կազմեր:

Ի՞նչ պէտք է ընել ուրեմն:

Լսարան-Բնութեցատունը մինչեւ աստիճան մը կրնայ չհեղձացնել հոսանքին ազդեցութիւնը: Ուրեմն պէտք է ունենալ միշտ Լսարան-Բնութեցատուն մը՝ իբրև ստոր ինքնազարգացման, իբրև տեսակ մը միութեան կապ՝ խորհող երիտասարդութեան միջեւ, իբրև հաճելի ժամադրավայր մը, եւ նամանաւանդ իբրև տեսակ մը միջոց ինքնապաշտպանութեան ազգային գոյութեանը:

Յետոյ կը հարցնէք.

3. Ինչո՞ւ այս նպատակաւ ի գործ դրուած ջանքեր բազմացուած արգիւնքը ունեցած չեն. եւ

4. Ի՞նչ աւելին կ'ըստասուի վարչութեանէս, եւ ի՞նչ ընելու է ժողովուրդը՝ ինք:

Անցեալին մէջ քանիցս տեսնուած է որ Բնութեցատան Վարիչ Մարմինները աւելի անձնական փուճ խնդիրներով զբաղած են քան թէ հասարակական

հարցերով, եւ զտրմանալու բան մը չկայ եթէ ըստ ստուած արգիւնքը սուած չէ:

Բնութեցատունը կը վերաբերի տեղւոյս հայ համայնքին, եւ պէտք է որ քիչ շատ ամէն դասակարգ իր ներկայացուցիչը ունենայ հոն - անշուշտ խօսքս թարմ ուժերու համար է: ատով ժողովրդի մը զանազան խաւերը զիրար աւելի մօտէն կը ճանչնան, ատով կարելի կ'ըլլայ գողափարաց փոխանակութիւն մը առաջ բերել: Ըստ իս, փափաքելի է որ Բնութեցատան արդի Վարչութիւնը առ այս միջոցներ ձեռք տանէ:

Եւ ժողովուրդը՝ բնականաբար՝ պէտք չէ անտարբեր մնայ՝ իր շուրջը եւ իրեն համար եղած այս տեսակ շարժման մը: շարժումը կենսական կարեւորութիւն մը ունի իրեն համար, եւ ո եւ է անտարբերութիւն գատապարտելի պիտի մնայ:

Բնզուհեցէք յարդանքներս:

ՅԱՐ . Լ . Ս . ՇՍՄԼԸԵՍՆ



Գ . Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

Մեր համակրելի բարեկամը՝ Պ. Ա. Պաշեան , «Մարիչ»ի, «Զկնորս»ի, «Ես այ մարդ եմ » եղև վեպերու հեղինակը եւ իր բարոյաբան յարմարութեանով ու «Ժողովարան Կարծիքներ» ու ծանօթ փիլիսոփայ ֆրոնտիստը , մեզի դրամ է ինասայից պատասխան մը , որմէ պիտի ուզէիմ յայտնած ծեսերը շարք մը մեր համեմատութիւնը վիրաւորելու բնոյթ ունեցող սկիւարկութիւններ , պարզապէս ծոյրերու , դատարկութիւններու ու շարքաբաններու՝ որոնց վրեժակի վրայ արգահասակով կը նայիմ խորքակիմ չ'եմբարկուելու համար : Բայց թէ ստիպուած եմք , մեր իրաւունքները յարգելով հանդերձ , մեզի եկած պատասխանները նշանակուած հրատարակու-

րեան սայ , մեր բարեկամ Պաշեանի նման թղթակիցներու ակողմով պահանջիմ վրայ :

Ազնիւ Սեդրաք .

17 Նոյեմբեր թուագրուած եւ քու իսկական անունով ստորագրուած շրջաբերականը անակնկալ մ'եղաւ ինծի համար : Ինչ . գրական մասնաճիւղ մ'ալ ունի հիմա Լատարան-Ընթերցատունը , որ - գուն լազիտան - քչիկ մը հետու է անարատ անմեղութիւն ու նենալէ գետ նոր ծնած՝ կամ , ճիշդն ըսելու համար , գետ չծնած երախայի մը : Եւ քանի որ ծնունդ առած է այդ գրական մասնաճիւղը , բնական եւ հասկնալի է որ անոր գոյութիւնը ծանուցուի քու ստորագրութեամբ միայն : A tout seigneur , tout honneur !

Պէտքը չեմ զգար գիտնալու թէ՛ ո՞վ եղաւ այդ մասնաճիւղը յղացողը ու ծնողը : Անկասկածօրէն պատուին է ան այն անվճառ եւ անմեղ սիրոյն , որով միշտ կը գգուես , կը շրջապատես Լատարան-Ընթերցատունը : Ինչպէս ուրեմն շնորհիւ անխոնջ փնտրող մտորը զարդոցաւ , սուճացաւ եւ պողարերեց , վստահ եմ որ , իր նորածին մանուկը , գրական մասնաճիւղը , պիտի նուազէս արդիւնուորի , իր սերմերը երկրին չորս հովերուն միջոցաւ ցանցնելով աշխարհի չորս կողմերը : Գէթ այս հաւատքը ունիմ , ազնիւ բարեկամ , քու մոգական զօրութեանդ վրայ , որ քե-

զի կը ներէ մագնիսեւ ուրիշները եւ բաղմապատկը-
 ուիւ, առաջ տանելու համար որ եւ է հայրենասիրա-
 կան ձեռնարկ (1) : Չ'կայ զժուարութիւն մը որ քեզ
 կասեցնէ ընտրած ճամբուդ մէջ, Գաւազանդ թիւիդ
 վրայ կարթած, գլուխդ գլխարկիդ մէջ մխրճած, կը
 զեզերիս Գահիրէի սրտոտաներուն վրայ, ծանօթ ու
 անծանօթ փողոցները, ըստ երեւութիւն մտածումնե-
 րու մէջ խորատուղում, բայց իրապէս ի խնդիր հայ
 զէմքի մը — բարեկամ թէ անտարբեր ինչ փոյթ --
 անոր առջեւ կանգ առնելու, մերթ ժպտուն մերթ
 խոժոռ զէմքով, բայց միշտ համոզկեր փաստերով ու
 շարժուձեւերով զայն ցնծայնելու (2) . ու, իբր շնոր-
 հակալութեան արտայայտութիւն, գլխարկիդ օգին մէջ
 թեթեւ մը տատանելէն ետքը, զայն ձգելով ուրիշի
 մ'օձիքը բռնելու ու իրիկունը՝ Լստրանի գանձապե-
 տին ձեռքը թափելու համար օրուան նոր հունձքը :

Երանի՛ քեզ, Սեդրա՛ք. քու հուսաքք ո՛չ մի-
 այն քեզ կը կեցուցանեն, այլ եւ ուժ եւ կորով կը
 ջամբեն Լստրան-Բնթերցատան, որ՝ իր կարգին՝ իր
 բոլորափքը կը սփռէ կեանք եւ լոյս : Արդիւնք անհա-
 տի մը, աղնուաբար օժանդակուած խել մը՝ ազգանը-
 ւէր սիրտերէ, զորս նախանձելի բաղն ունեցած է
 գանելու եւ յանկուցանելու . . . :

Եւ որովհետեւ որքան ժողովրդասէր եւ այնքան
 եւ յառաջգիմասէր, (համեստութենէդ կը խնդրեմ որ
 քիթ բերան չ'ծոմոկէ այս բառերը անսնելով) այս
 անգամ քու կարողութենէդ եւ գատողութենէդ ի-
 րբր սարակուսող, շրջաբերականով մը հանրութեան

վճռոյն կը գիմես, ի վեր հանելու համար բաղմա-
 կողմանի ճգուտը ընկերութեան մը, որուն — ինչպէս
 սովոր է — միշտ համեստ եւ արհեստաւոր դասակարգի
 պատկանող հիմնադիրները, այն առնն միայն գոհ
 պիտի ըլլան եւ իրենց խոնջէնքն ու տանջանքը վար-
 ձատրուած պիտի համարին, երբ տեսնեն թէ անոր
 փարոսը եղբայրութեան սիրով բոցավառ, միջօրէի
 անաղօս լուսով կը հալածէ եզիպտածին եւ եզիպտա-
 բնակ հայրենակիցներուն երկարատեւ եւ թանձրահոծ
 խաւարը աղէտաբեր :

Եւ հիմայ, այսքան երկարաբանութենէ յետոյ,
 որուն մէջ թերեւս գտնուին մի քանի բառեր՝ քու
 հարցումներուդ պատասխանող, հա՞րկ է պարձեալ
 դասնալ այս վերջիններուն : Կ'զգամ թէ՛ այո՛.
 Վասն զի կան բաներ որոնց ստէպ կրկնուիլը անհրա-
 ժեշտ է, գէթ գրողին տալու համար պարտականա-
 րութեան խղճի հանգարտութիւնը :

Կը հարցնես 1. Պէ՞տք է որ եւլն . . .

— Կը պատասխանեմ. Անպատճառ ո՛չ. եթէ ու-
 նինք մասնաւոր ժողովատեղիներ (ի բոց առեալ սըր-
 ճարանները, պատերը, դազինօները, էջօրսօները,
 ալգապարները եւ tutti quanti ուր օրը կամ գէթ շա-
 բաթը մի քանի ժամ, հայութեան երկսեռ ներկայա-
 ցուցիչներ միայն խմբուելով, իրենք զիրենք նուի-
 րեն իմաստալից եւ հանրօգուտ վիճաբանութեանց,
 ազգային, կրօնական, տնտեսական, վաճառակա-
 նական, զեղարուեստական խնդիրներու վրայ, խըն-
 դիրներ, որոնց պատշաճօրէն յուզումը, գիւրահաս-
 կընալի ուսումնասիրութիւնը անծանօթ եւ միշտ նոր

հորիզոններ պիտի բանայ, նոր ճշմարտութիւններ պիտի պարզէ մեր զարմանահար աչքերուն առջև, մինչդեռ միւս կողմանէ մեզ պիտի հանդիսատես ընէ այնպիսի զեղծումներու, այնպիսի ապականութիւններու որոնց գոյութիւնն անգամ չենք կրնար մտաբերել, վասն զի մեղապարտօրէն զխտակ կամ անմիջօրէն անգիտակ ձեռքեր զանոնք սքողած են անթափանց եւ լուսամերժ վարագոյրներու ետին: Երբ արդէն ունինք այս տեսակ ակօրտօլայրեր, այն ատեն հարկը չիմ տեսներ մասնաւոր Լոսարան-Ընթերցատան մը, որուն նպատակակէտը չկրնար զգալաբար շեղիլ վերեւ գծուած ծրագրէն:

Եւ որովհետեւ, դուրս ձգելով մի քանի անհատներու համեստ բնակարաններուն աւելի համեստ խրջիկները, չունինք նպատակայարմար ժամադրավայր մը, ԱՆՊԱՏՃԱՌ պէտք է զայն ստեղծել, խնամք տանելով որ նա կարծատեւ կեանք մը չ'ունենայ, ինչ որ ազգին մէջ պիտի նեղէ 1. վհատութիւն եւ 2. իմաստակներու վռնմակ մը: Կրկնակի դժբաղդութիւն, որ պիտի յանգի մեզի տալու կացութիւն մը չար քան զառաջինն, բարոյագէտ եւ քաղաքակա՛նապէս:

Այսպէս ուրիմն, Գահիրեաքանակներու համար ակմբատեղի մը եւ եզիպտահայերուն համար ակմբատեղիներ ունենալ աղ ու հոյ ունենալէ նուազ կարեւորութիւն չունին, զի «կեցցօք եւ մի մեռանից'մք»: Այս համոզումն կրնաւ ընդարձակել այնքան որ կարող ըլլաս մեր աշխարհասփիւռ գաղութները մէջը պարփակել: Իսկ այն վայրերուն կրնաս ուղած անունդ տալ:

Կը հարցնես 2. (Որո՞նք են) անորմէ առաջ երկած օգուաները, բարոյական թէ ազգային:

Կը պատասխանեմ. Տե՛ս վերը: Բայց որովհետեւ կ'զգամ թէ գոհ չպիտի մնաս մինչեւ որ զիս քիչ մը չ'յօգնեցնես, ես ալ ըստ կարբի կ'ընդարձակեմ ինչ որ արդէն ըսած եմ:

Աշխարհիս եւ ազգերուն պատմութիւնները թըղթատելու հարկ չկայ դիտնալու համար թէ մարդկութիւնը՝ զննելու բնապարզեւ յատկութեամբ միայն վայրենութենէ ելած եւ այսօրուան վիճակին հասած է: Զննութեանց արդիւնքները, զորս մենք նախնեաց փորձառութիւնները կ'անուանենք, արձանագրուած են անհամար հատորներու մէջ, որոնք օգտաւէտօրէն լեցուելու համար՝ բիւրաւոր մարդասէր եւ վեհ սիրտերու արեան մինչեւ վերջին կաթիլը ծծած են, փոխարէն մարդավայել կեանք բաշխելու համար իրենց խորհուրդ հարցնողներուն:

Կեանք՝ լոյս ըսել է. լոյսը՝ այն թուղթերուն եւ անոնց միջոցաւ մեզի ներշնչուած աւելի ազնիւ, աւելի վսեմ զազափարներուն մէջն է: Ուրիմն մենք որպէս զի ապրինք — բայց ո՛չ լծացեալ կեանքով — ինչ որ մեռելութենէ բնաւ չ'տարբերիր — այլ օթեւանէ օթեւան անդադար յառաջանալով դէպ ի կատարելութիւն, դէպ ի ճշմարտութիւն, անհրաժեշտ պէտքը ունինք մարդկութեան այդ դիւանաթուղթերը միշտ խուզարկելու, քննելու, անոնց մէջ նոր գիտտեր ընելու համար: Բայց որովհետեւ անհատ մը նոյն իսկ բիւրապատիկ ունենալով Մաթուսաղայի երկայ-

նակեցութիւնը , Սողոմոնին իմաստութիւնը եւ կրե-
սոսին դանձը , անբաւական պիտի ըլլայ այդ այլա-
զան գիտութիւնները իւրացնելու եւ միմիայն ան-
շահախնդրութեամբ եւ պատրաստակամութեամբ ամ-
բողջ ազգի մը սրտին մէջ ճշմարտասիրութեան ոգին
փչելով զայն ըստ կամս յառաջ կամ ետ վարելու .
ասկէ դատ , որովհետեւ չէ եղած եւ չպիտի ըլլայ կընա-
ծին մանկանացու մը որ՝ հակառակ իր իմաստու-
թեան եւ հանձարին՝ ենթակայ չ'ըլլայ իր ստեղծ-
ման դէթ մէկ պայմանին , որ է՝ սխալակալութիւնն :
Նկատելով այս եւ ուրիշ անփութելի ճշմարտութիւն-
ներ , որոնց տեսութիւնը կրնայ զիս շատ հեռուները
տանիլ , որքան բաղարձակապէս անկարելի եւ ան-
հեթեթ է մէկ կամ մի քանի հազար անհատներէ սպա-
սել ազգի մը բարեկուտութիւնը , նոյնքան եւ թերեւս
աւելի անհրաժեշտարար հարկ է որ ազգի մը եթէ ոչ
ս.մեհ անդամները , դէթ մեծամասնութիւնը յառաջ-
դիմութեան բազմազան պահանջը իրեն մէջ բաժնե-
լով՝ լուսոյ մէջ լողայ , մնացածները ըստ կարելւոյն
աւելի ապահովաբար առաջնորդելու համար :

Այս նպատակին իրականացումը դարձեալ պիտի
պարտինք հաստատութեան մը , որ մեզի պիտի դիւ-
րացնէ այդ գիրքերուն վայելումը եւ գաղափարներուն
փոխանակութիւնը ընթերցումով եւ բանախօսութիւն-
ներով :

Կը հարցնես 3 . « Ինչո՞ւ այս նպատակու եւլն »

Կը պատասխանեմ . զգոյշ կեցի՛ր , սիրելի Սեդ-
րաք , արխնահոս եւ ցաւազին վէրքի հետ կը խաղաս .
այս պատճառաւ պատասխանս կարճ պիտի ըլլայ :

Չուանի մը մէկ ծայրին դուն կապուէ , միւս
ծայրին ես կապուիմ , եւ աղւորիկ մը վազենք հա-
կառակ ուղղութեամբ . երկուքնիս ալ պոռայով « ազ-
գի՛ն համար , ազգի՛ն համար » : Ո՛ւր կ'երթանք մեր
այս սրտաշարժ համաձայնութեամբ . . . :

Ահա ինչո՞ւ մեր նպատակային արագութիւնը
միշտ ամօթահար կը մնայ ուրիշ ազգերուն կրիսյա-
կան զանդաղութեան տոջեւ : Ահա ինչո՞ւ բաղձաց-
ուած արդիւնքը չէնք ունեցած եւ չպիտի ունենանք
ցորչափ միութիւնը , համերաշխութիւնը եւ յարա-
տեւութիւնը կերպով մը չհաշտեցնենք մեզի հետ :

Մեր այժմեայ վիճակը տեսնելով , ազնիւը , որ
գործ կուզէ՝ կը Խիսի , եւ ումիկը , որ զուարթու-
թիւն կը փնտոէ , մեզ կ'ողողէ իր ծափահարութիւն-
ներով , զորս եթէ նուազ սնամէջ եւ աւելի կորովա-
միտ ըլլանք , առանց սխալելու պիտի թարգմանենք
« քս'թ , քս'թ . . . » :

Կը հարցնես 4 . « Ի՞նչ աւելին կ'սպասուի եւլն »

Կը պատասխանեմ . 1 . Միջոցներ դտնելու է
Լսարան-Ընթերցատան մուտքը ազատ ընելու եւ դրա-
մական անդամակցութիւնը ջնջելու : Պէտք է ըլլալ
սեւարժար բժիշկի . . . 2 . Հրատարակութիւններ ընելու
է : 3 . Ունեւորներուն դուռները փաւանելու է դրամ
եւ գիրք մուտքու համար : 4 . Չունեւորներուն դուռ-
ները փաւանելու է ձեր գիրքերն ու հրատարակու-
թիւնները թաշխելու համար :

Գիտեմ որ Յրդ . յօգուածին գործադրուիլը մի
քիչէն աւելի դժուար է : Ս.մեհ մահկանացուի բաղ-
խումին չեն բացուիր այն դուռները , որոնց ետին

խեղճուկ մը պատասպարուած են դեղինաւորները : Բաց-
ուին ալ, հոն սեւամորթ եւ հրալեզու կերպերներ
կան, զորոնք գիւթելու համար մարդ պէտք ունի
մասնաւոր սրինգի մը, զոր եթէ ունենար, արդէն
դուռը ամի չէր առնէր : Ասկէ զատ, կամ ասոր վրայ
բարդելու համար, պէտք ունիս նախապէս վստան
ըլլալ որ խալխալան քու լուսանկարդ չէ տուած, կամ
քեզ ճշգրտար եւ մանրամասնաբար չէ նկարագրած
իր անողոքութեան վերոյիշեալ սեւամորթ եււն : պա-
հապանին, յատկապէս տպագրելով որ եթէ քու օձիքդ
տեսնէ՝ ինք զբաղի պահապանաց պահապան terre-
neuveի մը շղթայն քակելու :

Բայց պէտք է նաեւ ըսել որ քիչ պիտի հանդի-
պիս այս տեսակ ժողովրդատէրներու, մանաւանդ Գա-
հիրէի ունեւորները ըլլալով հեղահամբոյր Մեկեհաս-
ներ եւ ճշմարտապէս ազգանուէր սիրտեր, որոնք
իրր այն չեն սիրեր ո՛չ փաղաքշանք, ո՛չ բամբասանք,
զիտացած ըլլաս :

Կայ ուրիշ միջոց մ'ալ, որ է... բայց կը տես-
նեմ որ Արամիկս ճմրթկած եւ պատուտած է այս հար-
ցին վերապահուած թուղթերը, եւ որովհետեւ ինչ
որ կարեւորագոյնն է՝ ma chandelle est morte... :

Ատիէօ

Քոյդ

Ա. ՊԱԼԵԱՆ

Ծանօթութիւն երես 32 ի :

(1) Ինչո՞ւ, ազնի՛ւզ բայց անխիղճ Պալեան, այս այլանդակ չափազանցութիւնները, որոնք բնա-

կանարար իրաւունք պիտի տան հանրութեան՝ մեծ
մե՛նծ բաներ յուսալու մէկ խեղճ բարեկամէդ : Կամ-
յը, բարի տրամադրութիւնը չէ որ կը պակսի, ո՛չ
ոչ՝ բայց ալ յոգնած կը զգամ կոր ինքզինքս, ու,
Դիողինէսի լապտերը ձեռքս բռնած, մարդեր կամ
ւնարդ մը փնտռելու ելած եմ, առանց սակայն ես
ինքս տկար մտնկանայու մ'ըլլալ դադրելէ :

—Բայց մարդ չկայ, Տէ՛ր իմ, թափուր է հրա-
պարակը, պիտի պատասխանէ Ազամի շատ միամիտ
շուակը, եզովբոս, ապշած :

(2) Օ՛հ, պատուաւոր մուրացկանութիւն չէ
հապա ի՞նչ է այս : Թողուլ որ յառաջդիմասէր երի-
տասարդ մը, փոխ սն իր թանկագին ժամերը գրչի ու
ժողովուրդին նուիրելու, մուրացկանութեամբ կամ
ուրիշները ցնծացնելով ժամավաճառ ըլլայ, լոկ ըն-
կերութիւններու ամենէն շահեկանը կանդուն պա-
հած ըլլալու ազնիւ փառասիրութեամբ :

Եւ դեռ ազգ մ'ըլլալ կ'սուզենք ...

Փա՛ռք եւ պատիւ մեր արձարանաւոյ երիտասար-
դութեան : Ս .

Գ . Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

Երկու սարի առաջ կը նստանանք ձեռքով մեր սպասարաններուն . որով երկու ընթերցարաններ ունենին ու մենք Քիչսար կը փակեինք : Երկու սարիներ անցած են այդ երանելի օրերէն , եւ նիւս Ալեքսանդրիայի երկու ընթերցարաններն ալ կազմալուծուած վիճակի մեջ են . շարժ ախր ունենալով . անշուշտ գործիչներու նուազութիւնը . ժողովուրդի սահմանափակութիւնը , եւ այն ցաւովի պատահումները որոնց բաւական չէր հարձած եւ Ալեքսանդրիա ասեակէ մ'ի վեր . պատահումներ՝ որով սնուած մ'եւս երեսան քերին մեր տնտեսական բարի քեզ , գեղեցիկ քեզ սգեղ . զովեղի քեզ պէտքայի կողմերը :

Բարեբախտաբար , կը շտեմէ որ այդ երկու կազմալուծուած ընթերցարաններուն յաջորդ կամ ժառանգորդը եղած է՝ հիւստ' մեզի քոյր Լասրան-Ընթերցասուն մը , «Տիգրան-Երկար Միութիւն» անուն սակ , որուն առաջին աշտու ու գեանաստեղի գործը եղած է աղտոտիկ souvenirsներով յիշատակելի պանել այն այցելութիւնը՝ զոր վերջին ասեակներս Ենդոսի հովտին ըրար սպգիւ շաւազոյն գործիչներէն Պ . Փորթուգալեան :

Սակն անդին գրեթէ ոչինչ , որչափ որ գիտեմք :

Ալեքսանդրիացիները կրնան անհամաձայն գտնուիլ սպգային այս կամ այն խնդրոյ մը շուրջը , բայց ընթերցարանի մը արքանուէր սեւակէն կերս՝ անկէմէիս ալ եղբայրներ ըլլալու ենք , ինչպէս փաստարաններ մտերիւն բարեխաղներ կը դառնան իրենք իրենց մեջ , դասարանէն դուրս :

Ալեքսանդրիայի նման կարեւոր ֆաղսֆ մը ուր սպգային խնդիրներով շահաբոլորուող հարուստ հայեր ունինք , ֆաղսֆ մը ուր հայերու մեծամասնութիւնը անուրի գաղտնիներ են , ֆաղսֆ մը ուր հայ արձարաններ չեն վիսար , ֆաղսֆ մը ուր համախալքուած են մտաւորականով հարուստ գրիչներ , մեկ մեկ մեծ ու պզտիկ հերոսներ . այդպիսի ֆաղսֆ մը , կ'ըսեմք , պէտք է որ ունենայ իր Լասրան-Ընթերցասունը , եթէ ոչ ընթերցասուններ :

Լոկ քաղաքի կամ Տիրապոլիսի խնդիրներու համար զիրար բզկեցը առողջ սպգարտութիւն չէ . երբ անդին կենսական հարց մը մոռացութեան կը տրուի :

Եթէ մեր դրացի սպգայիները շրջօրէն իրենց ընթերցարանով գրադար ըլլային , Տոքթ . Եղեկիեան , դեռ նորահաստ ու մեր ընկերային կեանքին անտեղեակ , առաջինը չպիտի ըլլար մեր հրատարակն ազնուաբար պատասխանող :

...Տիգր ,

Ենթակայիւ կը փութամ պատասխանել այն շրջաբերական համակիւն զոր ինձ հետ ուղղելու պատիւն ըրած էիք՝ ի պիմաց տեղուոյ Լասրան-Ընթերցասուն

Գործադիր Վարչութեան Գրական Մասնաճիւղին :
 Որովհետեւ բոլորովին անտեղեակ եմ տեղւոյդ
 Լսարան-Ընթերցատան թէ նիւթական վիճակին եւ թէ
 վարչական եղանակին մասին , իմ դիտողութիւններս
 ի հարկէ պիտի ունենան ընդհանուր եւ անուղղակի
 հանգամանք մը միայն :

Որպէս զի Լսարան-Ընթերցատուն մը կարենայ
 արտադրել բարեյոջող արդիւնքներ՝ անիկա՝ ըստ իմ
 խոնարհ կարծեացս՝ ունենալու է , նախ՝ սկզբնաւո-
 րութիւն մը՝ որ հաստատուած է առողջ եւ հաստա-
 տուն ելմտական եւ անտեսական հիման վրայ : Ու-
 ըրիչ խօսքով՝ անիկա ունենալու է եկամտաւոր կայուն
 եւ յարաճուն աղբիւր մը՝ որ պիտի կազմէ անոր նիւ-
 թական ոյժը , եւ պիտի ընծայէ իրական զիւրու-
 թիւններ՝ լաւ կերպով քննուած , գործնական ծրա-
 դրի մը անկաշկանդ գործադրութեան : Երկրորդ՝ Լը-
 սարան-Ընթերցատուն մը գրուած ըլլալու է այնպի-
 սի վիճակի մը մէջ՝ որով պիտի կարենայ ամենալաւ
 կերպով ծառայել իւր նպատակին : Աւելորդ է ըսել
 թէ՛ բոլոր հաստատութիւնք - Լսարան-Ընթերցա-
 տունները առանց բացառութիւն մը կազմելու - մի-
 ջոցներ են միայն նպատակի մը իրագործման հա-
 մար , եւ ունին այնքան կարեւորութիւն՝ որքան որ
 ինքեանք կարեւոր են արդիւնքներ արտադրելու մէջ :
 Եթէ Լսարան-Ընթերցատան մը վարչութիւնը չի
 կրնար նախատեսել , եւ կամ նախատեսելով հանդերձ՝
 չի կրնար գոհացնել իւր միջավայրին իսկական պէտ-
 քերը , մարդիկ պիտի փնտռեն իրենց փափաքներ-
 րուն գոհացումը ուրիշ տեղեր եւ կամ ոչ ամենե-

ւին : Ուրիշ կարեւոր կէտ մըն ալ՝ զոր երբեմն մոռ-
 նալու վտանգին մէջ կը գտնուինք , մեր եռանդին
 ուժգնութեանը մէջ՝ այն է թէ՛ ո եւ է ձեռնարկի մը
 յաջող եւ բարեբաւտ վիճակը՝ պարզապէս արդիւնք
 մըն է նոյն ձեռնարկին զորպացման , ընդլայնման ,
 եւ ամծան : Հանրային կամ ժողովրդային հանգա-
 մանք մը ունեցող ձեռնարկ մը պէտք է անցնի ան-
 ման տարբեր աստիճաններէն որպէս զի կարենայ թէ՛
 նիւթապէս , եւ թէ՛ բարոյապէս զարդանալ եւ զօրու-
 նալ , եւ ներշնչել աւելի վստահութիւն , եւ շահի
 աւելի մեծ ժողովրդականութիւն : Տաճկական առած
 մը կայ կ'ըսէ , «Սապր իլէ գորուզ հէլվա օլուր» , լէ
 թութ եափրաղը աթլազ :

Ինչպէս արդէն ակնարկեցի՝ ես Պատ . Գործադիր
 Վարչութեանդ ղեգոհութեան բուն պատճառները
 գիտնալու գիրքին մէջ չեմ գտնուիր . սակայն՝ կը
 վախնամ թէ՛ Պատ . Գործ . Վարչութիւնդ կը տառա-
 պի աւելի այն անպատեհութիւններէն՝ որոնք ար-
 դիւնք են նիւթականի անբաւականութեան (*) : Եթէ

(*) . Ո՛չ , յարգելի՛ Տօքթոր : Ո՛ղջ ըլլայ մեր վե-
 հանձն աներեսութիւնք : Ե՛է՛ն ու պայծառ մնան խա-
 րեր համար հինգ գահեկան բաժնեգին վճարողները :
 Ծատ երջանի՛կ տարիներ՝ մեզի փոխադարձ ո՛չ պար-
 տաւորիչ , ո՛չ ստիպողական կազմողչէք մ՛ընողնե-
 րուն ալ :


Բայց թէ , ձեռքերնիս վերամբարձ , մաղթենք
 յերկնուստ՝ որ Սանասարեան կամ Գալստեան պզտիկ
 բարերար մը զրկէր մեզի , միանգամ ընդ միշտ սա
 պատուաւոր մուրացկանութեանէն ազատած ըլլալու
 համար , Ամէ՛ն : Ս .

այդպէս է, դորմանը անշուշտ կը կայանայ դիմելու մէջ՝ ժողովրդին ազգասիրական եւ մարդասիրական զգացումներուն: Թէ ի՞նչպէս ձեռք բերելու է բարեշնորհ եւ բանիրուն աջակցութիւն մը համերաշխութիւն մը՝ խնդիր մըն է զոր Պատ. Գործադիր վարչութեանդ կողմանէ ցոյց տրուած շրջանայեաց արթնութիւնը, դործնական ոգին, եւ տեսութեան ընդարձակ եւ նուրբ ըմբռնումը՝ ինձ իրաւունք կուտայ կարծելու թէ անիկա ունի իր դերին կատարեալ գիտակցութիւնը, եւ գիտէ ինչպէս օգտուել իր միջավայրէն՝ ներկայացնելով իր պէտքերը եւ իւր ակնկալութիւնները պարտ ու պատշաճ կերպով՝ ուր որ անկ է: Արդիւնքի մասին չեմ ուզեր նախազուշակութիւն մ'ընել. ատոր պէտքութիւն չկայ. եւ անիկա երբէք ապահով չէ. սակայն կը սիրեմ հաւատալ թէ՛ անզուշտ ազգասէր եւ յառաջդիմասէր ազգայինք երբ տեսնեն անոր իսկական պէտքերը, վայելուչ կերպով եւ առատաձեռնութեամբ պիտի պատասխանեն կոչման մը՝ որ ուղղուած է իրենց խըզճին, իրենց պատողութեան, եւ իրենց սրտին: Եւ ինչո՞ւ պիտի զլանայ ժողովուրդ մը իւր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը այնպիսի ձեռնարկի մը՝ որուն միակ նպատակն է՝ առանց որ եւ է շահասիրական ձգտումներու՝ բարձրացնել Եգիպտոսայոցս թէ՛ բարոյական եւ թէ՛ մտաւորակոն մակարդակը, եւ ընծայել անոնց հաճելի եւ օգտակար ժամանցի առիթ մը:


Մաղթելով Պատ. Գործադիր Գրական եւ այլ մասնաւոր ճիւղերուն կար եւ յաջողութիւն, եւ փայլուն եւ օգտաշատ ապագայ մը:

ՏՕԻԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ

Աղեքսանդրիա



ՅՈՎԱՆՆԵՑ ՍԵՐԵԱՆ



Ծնած է Օրբա-Քեօյ, Կ. Պոլիս, 1853 ին .

Պատգամաբան դրամ է Կ. Պոլսոյ սոցալիստ
և օսար վարժարաններու մէջ՝ 1871 է սկսեալ
մինչև 1896, երբ ֆաշաֆական դէպքերը հար-
կադրած են զինք գաղտնի Եգիպտոս ու հաստատ-
ուիլ Գահիրէ, ուր վեց տարիներէ ի վեր Գա-
լլասեան վարժարանի մէջ կը պաշտօնավարէ իբր
Տնօրէն-Պատգամ :

Մասնաւորապէս հետէ հայերէն և Շուան-
սերէն լեզուներու . զիսէ նոյնպէս անգլիերէն և
գերմաներէն . Գրած է բանաստեղծական երկու
հատորներ, «Գրական զբօսանք և «Յուզման
ժաւեր» : Իր գրական ապարեզին մէջ՝ պարբե-
րաբար աշխատակցած է Պոլսոյ զանաբան հայ
ըրթերուն և հանդէսներուն, թիպէ իր արտադ-
րած աշխատանք արձակ թէ ոսանաւոր գրուած
ներդ մեծ մասակը մնացած են անթիպ :

Յ. Սերեան, իր Տիպիֆական ներշնչում-
ներով, ծանօթ դեմք մ'է գրական աշխարհին
մէջ :

Ե . Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

Մեզ՝ Եգիպտահայերուս անհրաժեշտ է ունենալ Լսարան-Ընթերցատուն մը, — առանց որակելու ա- նոր բազմակողմանի օգտակարութիւնը - գլխաւորա- բար երկու պատճառաւ :

1. — Մենք չունինք, — հակառակ նիւթական անբաղգատելի ապահովութեան — այնպիսի կանո- նաւոր կրթական հաստատութիւն մը, որպիսին՝ չափուած ու ձեւուած ժամանակի պահանջման ու ոգւոյն հետ, կարողանար մեր մատաղ սերունդէն պատրաստել այնպիսի անդամներ, որոնք զօրէին ան- հետել հայ ազգի յետաւնացութեան շատ ու շատ պատ- ճառներէն մին, ու մեզ դնէին այն ճշմարիտ ուղիին վրայ, ուրկէ միայն պիտի կրնանք հասնիլ մեր փայ- փայած ա՛յնքան գեղեցիկ ու միանգամայն պաշտելի նպատակներին :

Ո՞վ պիտի լրացնէ ուրեմն այդ զգալի պակասը : — Լսարան-Ընթերցատունը :

2. — Եգիպտահայ գաղութը կազմուած լինե- լով մի շարք տարբեր տարբեր երկիրների բնակիչ- ներէ, ու ասոնց իւրաքանչիւրը կրելով իր վրայ իր ծնած, սնած եւ մեծցած միջավայրի ազնեցութիւնը, բոլորովին բնական բերմամբ իբրեւ օտար կը վար- ու ի իրեն մի այլ տեղացի համարիւն ազգակցին

հետ : Մամուլը (°) երբէք չէ հետաքրքրուել այս կա- րեւոր տեղացի հարցով, իսկ ժամանակը, ամէն ինչ աւերող ու ոչնչացնող ժամանակը, չիս գիտեր ի՛նչ գեր- բնական պատճառով չէ յաջողել արմատախիլ ընելու այս տեսակ մը ապակեդրոնացումը, որը ուսիչ ցեցի նման բոյն է գրել եգիպտահայուն ընտանեկան շըր- ջանակէն սկսեալ մինչեւ բարենպաստակ հաստատու- թեանց վերին գահօյքը :

Չ'ունինք վարժարան, չ'ունինք անկողմնակալ մամուլ, (1) ո՞վ ուրեմն մեզ պիտի ճանչցնէ մեր սխալը, ու պիտի հասկացնէ մեզ վերջապէս թէ՛ մենք եղբայրներ ենք, թէ՛ ազգին շահերը ամէնուս կը պատկանին, թէ՛ սրբերը կամ որբուհիները — ո՛ր տե- ղացի ալ որ լինին — ամենն ալ մերն են, թէ՛ ազգի մէն մի անհատի յառաջդիմութիւնը բովանդակ հա- յութեան փառքն ու պարծանքը, ինչպէս նաեւ մէկի կամ մէկալի յետագիմութիւնը, ամբողջ հայութեան անպատուութիւնն է :

Պատասխանը ինքնին կը ներկայանայ : — Լսա- րան-Ընթերցատունը :

1) Եւ երբ անկախ ու անկողմնակալ մամուլ մը ունենալ ուղեցինք, պարոն Ա. յվազեան, ահուելի իրար- անցում մը պայթեցաւ : Երկինք գոռաց, երկիրը դը- ղըրդաց, ու խաղաղ օրերու մէջ գառնուկներ կարծը- ուած կղեմէս պատուելիները անգամ մէկ մէկ պըզ- տիկ աստուածներ դարձան մեր . . . գլխուն :

Լսարան-Ընթերցատուն մը ունենալով, մեր երիտասարդութիւնը, վարժարանէն դուրս, կրնայ մըշակել իր մտաւորական աշխարհը, եւ մանաւանդ անաղարտ պահել իր գիւրաբեկ բարոյականը: Անիկա՛ իր համեստ վիճակին մէջ, այնքան շատ բան կուտայ քմահաճ երիտասարդին, որքան չեն կարող տալ ամենաչքեղ զբօսավայրերը ու գեղարվեստական ժամագրավայրերը. անոր պատկառելի բեմէն թէեւ չի լըսուիր անփորձ երիտասարդին սիրային զգացումները բորբոքող Սօնասի կամ մի այլ նմանօրինակ գեղեցիկ կտորի թրթռուն ելեւէջը, բայց անկէ յաճախակի մեր բթացած ականջին կը հասնի մեր ազգային ինքնանաճանաչութիւնը բորբոքող ու վառ պահող հայրենիքի ողբերգը: Անիկա վերջապէս այն հոգատար ու հարազատ մայրն է, որի բազուկները մէջ միայն պիտի կազմակերպուի ճշմարիտ հայը, առանց հանդիպելու անիմաստ ազատութեան վտանգներին՝ Եզրիպտոսի մէջ:

2. Լսարան-Ընթերցատունը չի առաջգրմեր, ու բաղձացուած արդիւնքը չի տար, անոր համար, որ նիւթականի հետ կը պակսին եւ այնպիսի բարոյական ուժեր, որոնք կարող ըլլային մեր յոյսերը արգարացնել:

3. Լսարան-Ընթերցատան վարչութիւնը պարտի նախ ինք իրեն հարց տալ թէ՛ արդեօք ինքը ունի՞

պահանջուած զարգացումը, հմտութիւնը, (2) եւ որ ամենակարեւորն է ժողովրդի գիտակից յարգանքը, լաւագոյն եղանակաւ առաջ տանելու համար իր ըստանձնած ծանր պաշտօնը. իսկ ինչ կը վերաբերի ժողովրդին, այն եւս պարտի չ'իսնայել իր նիւթական եւ մասամբ ալ բարոյական ուժերը, լաւ ըմբռնելով թէ՛ այս հաստատութիւնը մին է այն նուիրական հաստատութիւններէն, որոնց ծոցէն ստէպ ազգերի ազատարարները ծնած են:

ԿՍՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

(2) Ենթադրենք թէ ոչ, կամ ապահովապէս ո՛չ. բայց գէթ այսօրուան վարիչ մարմինովը զօ՛ն ըլլալ գիտնանք, մինչեւ որ կարենանք հարաւորապէս աներէ կազմուած հմուտ, զարգացած ու ժողովուրդին յարգանքին արժանի վարչութիւն մ'ունենալ, ինչ որ մեր անկեղծ եւ ամենաջերմ փափաքն է. պայմանաւ միայն որ մեր ճանչցած համալսարանականները, ժողովրդային կենսական շահերէն աւելի, իրենց սնափառութեան ու զարչելի « ես » ին վրայ խորհողներ չ'ըլլան:

Որ ունիցի ականջս՝ լսելոյ լուիցէ:

2. Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն



Ձեր հարցերը յղի են իրենց պատասխաններով :

1. Անուրօնալի է որ, ինչ որ մարդ Լսարանի մէջ կը լսէ, կենդանութիւն կը ներշնչէ մտքի ու սրտի: Հետզհետէ կը յուզուի կ'ալեկոծուի գաղափարի մարդը, երբ կայծակնացայտ խօսքերով կը բացատրուին ժողովրդոց ցաւերը, ու ցոյց կը տրուին յուսոյ արիւններանդ բոյց փրկուէտ ճամբան:

Հոն՝ խաւարը լոյսին առջեւ կ'անհետի, եւ անիբրաւութիւնը եւ բարբարոսութիւնը գլխիկոր կը մնան արդարութեան եւ ճշմարտութեան ի տես: ու, մինչ մէկ կողմ գիշուած գրքերը կը յիշեցնեն ազատուելու կարօտ ժողովուրդի մ'իր ազգին հանդէպ ունեցած պարտականութիւնները, քնացող միտքը անգամ անզգալարար կ'արթննայ, յեղաշրջիլ կը սիրէ, կը թօի դէպ ի վեր, անհունին անծանօթ հորիզոններուն տակ:

Այսպիսի յարկ մը կարելի չէ՝ անուանել յոյսերու, յոյգերու տօճար, եւ կամ վերածնունդի օրբան մը, սրուն մէջ մեր մանուկ գաղթականութիւնը այնքան կը կարօտի տարուբերուելու՝ ոտքի կանգնելէ առաջ:

2. Եգիպտոսի հոյ գաղութը հիւսուած ըլլալով հայկական քաղաքներու ու գիւղերու մարդ-նմոյշներէ, շատ ատեն իրարմէ հեռու եւ իրարու անծանօթ ապրած են՝ ազդուած աղտոտ միջավայրէն, ու հետեւելով նախապաշարման կարծես գոյն առած սըզեղ սովորութիւններու: Այսի'նչ քաղաքացին կասկածոտ աչով կը նայի այնի'նչ երկրացիին, ու փոխադարձաբար...

Կենցաղավարութեան այլազան եղանակներէ առաջ եկած այս ցրտութիւնը ուրեմն տեսակ մը անգործութիւն երեւան բերած է հոս, շատերու քով կարելի է ըսել: Լսարան-Բնութեցատան դերը պիտի ըլլայ, նմանօրինակ պարագաներու մէջ, ճանչցնել ամէնքին հայրենասիրական եւ եղբայրակցական փոխադարձ պարտականութիւնները՝ անխտրաբար եւ առհասարակ ամենուս ներշնչելով առաջ վազելու փափաքը, եթէ կ'ուզենք արեւելեան թմրած ազգաց վերայ առաւելութիւն մ'ունենալ:

3. Երբորդ հարցը քիչ մը վհատութեան երեւոյթը ունի: (1) Բաղձացուած արդիւնքը կարող է

(1). Բնա՛ւ, պարո՛ն. վհատելու պատճառ մը չունինք եւ չենք կրնար ունենալ, որքան որ ձեզի նման ազնիւ երիտասարդներ սրտովնին մեզի հետ ըլլան, եւ որչափ ատեն որ վեհանձն աներեսներ, Ulysse en haillonsի դաւազանը ձեռքերնին, ափ պիտի առնեն իրենց ազգակիցներու դռները՝ ամեռիկ չամե,

չուշանալ. (2) որ եւ է անկեղծ եւ անշահախնդիր զո-
հողութիւն ի զուր չանցնիր, եւ աստիճանաբար յա-
ռաջգիմութիւնը մի օր կը պսակէ այն անվհատ ջան-
քերը, որ ազգասիրաբար կը նուիրուին համայնքի
մը բարելաւութեանը:

4. Ուղեկորոյս գաղթականներու ալէտանջ հոգին
յոյս, լոյս եւ մոռացութիւն կը փնտոէ: Մեր վիճա-
կովը անկեղծօրէն հետաքրքրուողներէն կ'ակնկալուի
անձնուիրութիւն եւ զոհողութիւն: (3) Պարտականու-
թեան մը յանձնառու եղողներ, եթէ զիտակցօրէն
չի նետուին հրապարակ, չի սերտեն ամէն անկիւն ու
հաւառք չի ներշնչեն, այն ատեն ժողովուրդը դժ-

Ծանօթութիւն 53րդ երեսի.

Աին առջեւ գլուխ ծռելով... Ու մեր կարծեցեալ զար-
գացած երիտասարդութիւնն է որ չտեսնալ պիտի ձե-
ւանայ, թէ մեր պատիւը իրենն ալ է, որ յաճախ
կ'անարգուի իրենք զիբենք բան մը կարծող բայց
խկապէս բան մը չարժող մարգիկներէ:

Մարդ անզգալաբար անիշխանական կը դառնայ,
հեռուէն իսկ այդպիսիներու երեւոյթը տեսնելով

(2). «Բաղձացուած արգիւնք» ըսելով պէտք է
հասկնալ ընթերցատուն մը՝ այնպէս ինչպէս մենք
երեւակայել կ'ուզենք:

(3). Ինչպէս եւ ժողովուրդէն կ'ուզուի պարտա-
ճանաչութիւն. եւ մեր ուզածն ալ՝ փառք Աստուծոյ՝
մեծ լան մը չէ, հինգ դահեկան կանոնաւոր ամա-
վճար մը voilà tout: U.

ուարաւ կը ճանչնայ անոնց հեղինակութիւնը:


Գաղտնիքը լաւագոյն յաջողութիւններուն՝ ու-
րոնց սրտանց կը տենջայ ամէն հայրենասէր հայ,
կարելի է փնտռել մաքուր զգացմանց, լուրջ մտած-
մանց եւ յարատեւ գործունէութեան մէջ: Անվհատ
աշխատութիւնը, որ պէտք է ամէնուս մեծ նպատա-
կակէտը ըլլայ, զարմանալիօրէն կը զօրացնէ մարդը.
հաստատուն քայլերով որ եւ է նպատակի արշաւողը
առաջ կը բերէ յորձանքներ, որոնք բաղխելով նա-
խապաշարմանց պինդ հոնգոյցներուն՝ կը փշրեն զա-
նոնք, իսպառ փոշիացնելով անոնց բազմադարեան
մահաբոյր հետքը:

Վարչութիւնը ուրեմն թող ընէ ինչ որ կարող է
ընել, մնացեալը հասարակութեան թողլով: Անգամ
մը որ հասարակութիւնը իր թմբութենէն ուշաբերի՝
պիտի իսկոյն իր վրայէն թօթուէ ամօթի կարմիր
փոշին:

Եւս է գէթ հաւատքը զոր ունիմ, եւ որուն կու-
ղեմ միշտ կ'առչած մնալ:

ՕՆՆԻԿ ԹՈՒՄԱՆՆԱՆ

ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՂԵՐ



Ազնիւ Մ . 0

Քանի որ այդքան կը բազմա լսել բարեկամիդ խոհերն ալ քեզ շատ սիրելի եղող յարանական փայլուն ու մնայուն կազմակերպութեան մը անթիւ, որոյ մասին, անցելոյն մէջ, յաճախ ինքն ալ քեզ հետ, զլուխ գլխի, խորհելու ունէր պատիւ, ահա՛ կը փութայ ներկայիւս պարզել քեզ իր փանօքի մտածումները :

Նախ՝ համոզող ու համոզուող միտքդ խոհուն գիտակ եղած է, որ բնութեան ծոցին մէջ չ'կայ վայր մը հաճելի ու պաշտելի քա՛ն խորանն այն սրբազան, ուր գաղափարներ այլազան՝ ցոլքերուն ներքեւ հողւոյն, կը ծոցւորին, եւ խորհուրդներ կ'երկնեն կենսական ու իրանալի : Մտքի տունն է այս. երկզուս լսարանն անձառ, ուր կենդանի բջիջներ կազմաւ, հրաշալի ու անբացատրելի ներդաշնակութեամբ : Երկնից բարձրութիւնը, երկրին խորութիւնը, տիեզերքին անբաւութիւնը գանկ կոչուող թանկ անօթին երեւակայական ոչ-նօթի թռիչներուն շրջանակաց մէջ կը պարագրին հոյակապ, հսկայ մտածումով մը . — Աստուած :

Ուրեմն, թո՛ղ լուեն պահ մը հաստատուած հաստատութիւններն աստղապսակընկալ երկնքին . թո՛ղ ծնրադրէ, անձայն, երկիրն կորաքամակ, նկուն ու զողոջուն, ոճիրներու, մեղքերու տակ անքանակ, եւ թո՛ղ ամփոփեն իրենց կապոյտ ու ծփծփուն քրդանցքներն անյատակ ծովերն աշխարհի, երբ միտքն հոգւով կ'ունկնդրէ աստութիւններն Աստուծոյ, զոր թօսքն լուին կը խօսի բնական զօրութիւններու միջոցաւ, ինչպէս յաճախ թեւերուն մէջ հողմերուն՝ որք ալեաց մէջ ջրերուն՝ պատմեն կեանքը երերուն, այլասերեալ մարդկութեան, գոռումներով վշտագին : Աղէ՛, գոգաւորի՛ր, Մայր Բնութիւն, ինչու որ քիչ ատենէն գոգէդ գիրգ ու սիրուն անգամ մ'ալ պիտի լսուի . . . այն հեշտալի ու մէկին ձայնն արարչական, որոյ թրթուուն ոլորտներուն ազդեցութեան ներքեւ չգոյութիւնը՝ գոյութեան ու խաւարը՝ լուսոյ փոխարկուցաւ : Տիեզերք, ստեղծագործութեան խորախորհուրդ արդասիւքը, կեանքի պատմութեան առաջին ու վեհապանծ Լսարանն եղու, ուր Ենօվայն աստուածային կենդանարար շրթներով բուն իսկ կեանքը խօսեցաւ, եւ անոր սիրակաթ ու աքրուկ ծոցէն խուսափող Բանը՝ կեանքի անպատում ու հրաշազան երեւոյթներն յառաջ բերաւ, զաշնակաւոր ու նուիրական եղանակաւ :

Եւ սակայն, երկինք ասուպներով, մտահար հրբատեսիլ նշաններով ու անքննելի խորհուրդներով ալ աւելի կը խօսին, կ'աղաղակեն հիմայ . . . աշխարհ գիտական հրաշակերտներով ու սարսափածին պատահարներով թօսքին ըմբռնման կարեւորութիւնը կը

չեչտէ . եւ իրերն ու բնական նորանոր երեւոյթները՝ իրականացածներն , եւ մանաւանդ , իրականալիքն լըսել ու տեսնել կը հրաւիրեն խօսուները : Լսել , տեսնել , խօսիլ , եւ գործել , ահա՛ շորս հոգեչուենչ բառեր , որոց համաչափ չղթայաւորումին մէջ կը բովանդակի բարոյական ու բանաւոր մարդուն կեանքն ու պարտաւորութիւնները : Մարդկութեան իմացական ու գործնական ո՛րեւ է փառաւոր մէկ ընթացքին հիմնաձայնը կազմած են յաւէտ այս շորս խօսքերը . հետեւաբար , ամէն մարդ պարտի լսել անկեղծ , բարի ու կենդանարար խօսքը . տեսնել , կամ լա՛ւ եւս , հոգեւոր աչքերով նկատել մաքուր ու մտապարար տեսարաններն բնութեան ու հոգւոյն . խօսիլ սիրասնունդ սըրտի վսեմ զգացումներով՝ ու արտայայտութիւններով փրկարար , ազնուացնող խօսքը խոցոտած ու յուսահատ սրտերուն , զանոնք սփոփելու գթոտ նպատակաւ . եւ գործել ու իրացնել բոլոր այն պարտականութիւններն սրբազան , զորս կը թելագրէ մեզ բնութեան վեհապանծ լսարանին ծոցէն արձագանք տուող ձայնն Անծանօթին , որ թէեւ շատ ծանօթ է փափաքողին , Բան անունով , կենաց-Բանին կենսառաք էջերուն մէջ :

Օ՛ն , մխրճուինք քեզի հետ միասին , սիրելի բարեկամս , մտածումներով կուսական , կոյս ծոցին մէջ բնութեան , ուր ամէն օր կը կատարուի անգործարանաւոր ու գործարանաւոր նիւթերու , ոչ-խօսուն կենդանիներու ու բոյսերու ծառայութեանց ու տուչութեանց պաշտօններն գերազանց , զորս մարդն եւեթ

կը ջանայ ընել զանց , ոգին զոհողութեան՝ ենթարկելով դերութեան , վասն գծուծ զգացմանց :

Շիտակն ըսէ՛ , վսեմ չէ՛ լսարանը հանքաւոր աշխարհին , ուր պէսպէս մետաղներ անդադար կը զոհուին յօգուտ բուսական հարստութեան : Ոչ նուազ առատածեռն են բուսականները , ինչու որ երբէք իրենց չեն վերապահեր իւրացուցածնին , այլ կենդանական դասակարգին լսարանը , տեսարանը ու ձաշարանը կ'ըլլան , եւ փոխադարձաբար :

Մանե՛նք խորհրդուոր անտառներու խորը , զիտեւելու համար լսարան կազմող խումբ խումբ թըռչուններն թռչուն , ականակիտ առուակներուն քով գգըչուն , ուր զմայլելի դեղեղանքներ կը յօրինեն , ազնուացնելու համար անպարկեշտ ու կոշտ ասացուածներով խորթացած լսելիքն մարդուն : Խնդրեմ , մի՛ կոխտտեր գունագեղ ծաղիկներն փունջ փունջ , որ անտառներն կապերտելով՝ լերանց կատարը կը հասնին , եւ հիասքանչ տեսարաններ կը ձեւացնեն համր ու մուշկ : Ասոնք բնութեան զոհարար ու կենսաբաշխ օրէնքին հնազանդելով՝ հեշտաբոյր բոյր կը սփռեն կենդանայուն ոգին մէջ , զոր վայելեն հեշտանօք անգունքներ սնամէջ :

Ուրեմն՝ քանի որ համակ տիեզերք դեռ եզերք կը կազմեն խօսքին շարունակաւոր արտայայտմանց շուրջը , եւ կը ձեւացնեն անսահման լսարանը անձանելի բնութեան , ըսել է սկզբամբ լսելն է բնական ու կարեւոր , եւ հետեւաբար խօսուն արարածներուս համար մասնաւոր լսարան մը ունենալն օգտակար ու պարտաւորիչ : Ընկերական զանազան համայնք-

ներն ուր որ ալ ըլլան, ունենալու են իրենց առաքինի, շինիչ, հրահանգող, ազնուացնող ու բարձրացնող զգացումներու ողջակիզման արքանուէր սանսրը, հաւաքական ու ներդաշնակ ձայներու կենդանի դաշնակը, ազնիւ, մարդասէր, զարգացած ու զարգացնելու առակ հոգիներու խորքը, այն Հանգիստարան-Լըօտարանը, ուր եւեթ կարելի պիտի ըլլայ կոփել ամէն տեսակ խոպան մտքեր, եւ դարբնել ու տաքցընել սեւցած, ստոած սրտեր, ջամբելով անոնց իրական, բարոյական ու տեւական սէր: Ողջամիտ ու դաստիարակուած հոգին՝ երբ դարձեալ փաթտուի եռանդագին, անկեղծ սիրոյ սիրածնունդ թեւերուն ու ճշմարտութեան Բանին, անտարակոյս կը շինէ այն անբիծ նկարագիրը, որ բարոյական ու իսկակիտ կեանքին միակ հիմն է: Այս օրինակ օգտաշատ Լըօտարանի մը գոյութիւնը կախում ունի թէ մտաւորապէս եւ թէ բարոյապէս զարգացուն մտքերու եռանդուն օժանդակութեան, եւ որոյ օգուտները, անտարակոյս, մտաւորական ու բարոյական պիտի ըլլան միանգամայն: Առանց այս վերթեւող վերածնական մտաւոր ու գործնական թռիչներուն, այլասերումը՝ որ յոռեփոխութիւն կը նշանակէ, եւս առաւել պիտի ծաւալի, եւ յոռետեսութիւնը ահաբեկելու ստոծան պիտի զարգացնէ, անուղղայ ու ինքնահաւան քայլերու հետեւանօք փռած ըզիզներու սահմանափակ ու բլշացած տեսութեանց ցեխոտ ալուցը մէջ, եւ որով երբէք կարելի պիտի չըլլայ արտադրել այն բաղձացուած արդիւնքը, այսինքն մարդը հասցնել այն իտէալ վիճակին, որոյ երկինք ալ փափաքին,

հետեւելով օրինակին կենաց-Բանին դիւցազն Վարդապետին:

Հետեւաբար, փափաքներուդ իրական լրումը, սիրելի Ս., իրապէս Քրիստոնեայ ու դաստիարակուած գործօն մարմնոյ մը զոհարար շարժմանց մէջ միայն կրնաս տեսնել: «Նախ ասեմ, եւ ասպ ոչ ամաչեմ»: Ճշմարիտ քրիստոնէութիւնը կեանքի ազնուացման ու յարատեւութեան դերազանց սկզբունքն է, որոյ նըշանաբանն է ծառայել, — իմա՛ զոհուել, — զոր մարդիկ բոլորովին խեղաթիւրած, յեղաշրջած են, կեաքի իսկական ճանբայէն դուրս ապրելնուն համար: Ուրեմն լաւ դիտցիր որ՝ այդ սկզբունքին անմիջական վերստեղծութեանը կը կարօտի մարդուն անկեղծ բարձրացումը, եւ Պատ. Վարչութիւնդ յարածամ ի նկատի ունենալպարտի այս հիմնակէտը: Աշխարհի մէջ, մարդը միակ արարածն է, որ կասէր, խորթ հակուսինքնով անզգայացած՝ բնութեան օրէնքին հակառակ կ'ընթանայ, եւ կը չքանայ ինքն իրեն մէջ, ամէն բան տգահօրէն հաւաքելով ու վերապահելով իրեն: Անզգալարար կործանիլ, չքանալ, մեռնիլ է այս, անէացման լայնարաց կլափը՝ որոյ մութ խորափիտին մէջ դրորած են անցելոյն միահեծան ու ետատին մէջ դրորած են անցելոյն միահեծան ու ետատին մէջ գլխաւորութիւն ընծայած են պաշտ ազգերը: Քիչեր ուշադրութիւն ընծայած են կեանքի այս յորձանուտ ընթացքին, եւ ներկայիս մէջ իսկ շատ նուազ են անոնք՝ որ կ'զգան մարդկութեան ազատ, անկուշտ սրտին վրայ բացուած այս մահացուցիչ խորունկ վէրքը:

Ի մի բան՝ ո՛վ եռանդուն Օ. խիստ հարկաւոր է Եգիպտահայոցս համար Լստրան մը, որպէսզի այլեւ-

այլ գիտութիւններով ու կարողութիւններով օժտուած բարոյական մտքերու վերածնող ձայները բարձրանան հոն , յստակ ու որոշ խաղերով , կրթելու համար այն մտքերն ու սրտերը , որոնք , աւա՛ղ , դարերու վախճանին մէջ , իմացական հաստատուն դարգացման եւ անձնութեան ազգակն եզոզ հոգեկան գերահրաշ սիրոյն գատարկութիւնը կը ներկայացնեն : Եւ սակայն , ձեր պահանջները ծանրանալու են , ժողովուրդէն աւելի , տեղույս այն երկրասարդութեան վրայ , որ զարգացած մտքերով միշտ ծառայուել կը սիրէ , եւ անբարոյականութիւնը , իր բոլոր ճիւղերով , կ'ապրի . խօլարար՝ կ'պառէ ընդվայր բնութենէն իրեն պարգեւուած թանկագին կարողութիւնները , եւ իր նմաններուն համար ապրելու տեղ՝ որպէս կը թելագրեն բնութիւն ու գիտութիւն , իրեն համար կ'ապրի սոսկ , չ'զգալով երբէք ամօթի կարմրութիւնը՝ որ դրդութիւններու ու աննկարագրելի մոլութիւններու հրակէզ ու սպառիչ ազդեցութեանց ներքեւ շատոնց աներեւութացած է . . . :

Սրտագին մաղթելով դարձ ու կանգնում այդ անկումէն այս խումբին ,

Մնամ բարենպատակ խորհուրդներուդ իրականացման իրապէս փափաքող բարեկամդ

Կ . ՈՒԶՈՒՆԵԱՆ

Է . Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն



Ս զ ն իւ Պ ա ր օ ր :

Շատոնց է որ կ'ուզէի ունենալ առիթ մը , ձեզի յայտնելու համար համակրանքս եւ ուրախութիւնը զոր կը զգամ՝ Լսարան-Ընթերցատան ծանրաքայլ բայց յարատեւ յառաջգիմութիւնը տեսնելով :

Պատ . Վարչութեան բոլոր անդամները թող հաճին՝ ուրեմն՝ այս աթիւն ընդունիլ յարգանքիս եւ զնահատումիս (1) ջերմ հաւաստին , որուն կը կցեմ պատասխանս :

(1) . Կարապետ Էֆէնտի Միհանօֆի գնահատումը մեծ արժէք ունի մեզի համար : Զերմապէս փափաքելի է միայն որ Միհանօֆ Էֆէնտիի նման կարեւոր անձնաւորութիւն մը , անցեալին մէջ իր հայրենասիրական վառվռուն դործունէութեամբը համբաւաւոր , դիրքով ազդեցիկ , տարիքով եւ փորձառութեամբ պատկառելի , պահ մը մէկդի թողուր իր երկարատեւ retraite՝ ու զար սահձահարող Մենտոր մ'ըլլալու տաքզլուխ ճանիղ երթասարգներուս , որոնք իրենց յախուռն փութկոտութեամբ աւելի կոտորել գիտենքան թէ . . . չ'իներ :

Ա. Այո՛, անհրաժեշտ է որ ունենանք Լսարան-
Ընթերցատուն մը, ոչ միայն Եգիպտահայերս, այլ
եւ ամէն տեղ՝ ուր որ հայեր կան, եւ ի՛նչ թիւով
ալ որ ըլլան:

Բ. Լսարան-Ընթերցարանները եղած են եւ միշտ
պէտք է որ ըլլան՝ բարոյականի եւ ինքնազարգաց-
ման լաւագոյն առաջնորդները: Հոն, բարոյականի գի-
տութեան ուսանողի մը քով, Ազգայնութեան սէրը ինք-
նին կը ծնի: Ո՛վ չգիտեր թէ, բարոյական գիտութիւնն
է որ այսօրուան յառաջգիտութեան հասցուց մարդ-
կային սերունդը, բայց թէ մենք՝ հայերս՝ դեռ նոր
սկսած ենք մտնել այդ շաւղին մէջ:

Շարունակենք մեր քայլերը, յամբար, բայց
գիտակցօրէն եւ համերաշխ ողբով. աշխատինք ա-
ռանց վնասելու եւ յուսանք: Լաւ է անազան քան
երբէք:

Գ. Եւ ժողովուրդի մը առաջնորդներն ալ պէտք
չէ ուրեմն որ վնասիլ գիտնան, երբ իրենց նպա-
տակը վստմ է, անկեղծ եւ յոսանքգիտական: Իրա-
ւունք չունիք, կարծեմ, երբ այդ նպատակաւ ի
գործ դրուած ջանքերուն համար չուա մը բաղձաց-
ուած արդիւնքը կը սպասէք: Ի՛նչ ջանքեր եւ ինչ-
քա՛ն զոհողութիւններ չէ ըրած Եւրոպան, պարզա-
պէս այսօրուան քաղաքական ու ընկերական ճշմա-
րիտ եւ առողջ սկզբունքներուն հասնելու համար:
Միթէ ժողովուրդին ամէն դասակարգերը համալսա-
րաններէ՞ ելած են, որ գիտնային չուա մը ձեր իդ-
ձերուն լիուլի զոհացում տալ: Արեւը, սակայն, իր
րնական պայծառութեամբ եւ ինչքան ալ թանձրա-

հոծ ամպերով վարագուրուած ըլլայ, ուշ կամ կա-
նուխ պիտի երեւայ, պիտի փայլի, պիտի ճառագայ-
թէ, պիտի լուսաւորէ աշխարհը: Կոյրերը միայն չի
պիտի կրնան՝ ի մեծ դժբաղդութիւն իրենց՝ վայելել
անոր օրհնեալ ու կենսատու լոյսը:

Դ. Աւելին չենք կրնար սպասել վարչութիւնէդ:
Ձեր շատ նիհար միջոցներով ըրէք ինչ որ աւելին
կրնաք ընել et vous aurez bien mérité de la patrie:

Եւ ժողովուրդն ալ միայն իր տուածին չափ
կրնայ պահանջուիլ ըլլալ:

Կ. ՄԻՀԱՆՈՅ

Ը. ՊԱՏԱՍԻՍՆ

Մեզ՝ Եգիպտահայոցս, Լսարան-Ընթերցատուն
մ'ունենալ (ու՛չ թէ քլիւպ) այնչափ անհրաժեշտ է,
որչափ եկեղեցի մը՝ մինչեւ իսկ կրնամ ըսել թէ ե-
կեղեցիէ մ'ալ առաջ է, զի այդ բարոյական յարկին
չնորհիւ, Եկեղեցոյ վրայ սէք եւ հաւտաք չունեցողն
իսկ, հոն լսածին եւ ուսածին ազդեցութեամբ՝ կըր-
նայ յարիլ դէպի այն: (1)

(1) Եթէ այս այսպէս է, ինչո՞ւ եկեղեցին, դուք
ըսէք առաջնորդարանը, մեզի կը զլանայ Գլիւպի մը
գրքերը, որոնք չարածճի մկներուն հոտառութիւնը
արթնցնելէ զատ ուրիշ բանի ծառայած չեն ցայսօր:

Լսարան-Ընթերցատունը կրնայ ըլլալ եգիպտահայ երիտասարդութեան բարձրագոյն համալսարան մը բարոյականի բարձրացման: Հոն յաճախող երիտասարդ մը կրնայ կապուել անոր հետ ա'յնպիսի բուռն սիրով, որ երբէք չի կրնար լքել զայն ինչպէս իւր ընտանեկան յարկը: Այլեւս զինքը շատ չեն հետաքրքրեր պառտեռու զուարճութիւնները եւ սրճարաններու խաղերը՝ որոնք ուրիշ բան չեն բայց եթէ ժամանակի, ստակի եւ յաճախ բարոյականի կորուստ:

Բնական է որ միշտ ամեն ազգագուտ ձեռնարկներու համար ազգայնոց հաւաքական ուժեր հարկաւոր են: Լսարան-Ընթերցատունը մեծ դեր կը կատարէ անոնց իրագործման համար, միացնելով մեզ իւր յարմարագոյն յարկին մէջ: Շատ ու շատ են մեր խորհելիք եւ կատարելիք պարտականութիւններն հանդէպ մեր ազգային գործերուն բարելաւութեան. անոնց կատարեալ լուծումն, սրճարաններու գոռում գոչումին եւ կէս ապականեալ միջնորոտին՝ մէջ չենք կրնար փնտուել:

Յաճախ ժողովրդային հաւաքումներու պէտք լինելուն՝ ստիպուած ենք օտարներու քսակներն պարարտացնել, վասն զի չ'ունինք մի ՅԱՐՄԱՐ Լսարան-Ընթերցատուն:

Այսպիսի բազմատեսակ օգտակարութիւններ ունեցող յարկի մը գոյութեան, յառաջդիմութեան կամ տեւականութեան համար 'ի գործ գրուած ջանքերուն բաղձացուած նպատակին չ'հասնիլը, ներուրի նձ ըսել, բացարձակապէս մեր մեծամասնու-

թեան անհոգութեան, ետասիրութեան եւ անհամաձայնութեան պատճառաւ է: Ահաւասիկ զգուելի ատեր, որոնք արգիւնք են չափազանց ագիտութեան, Տգիտութիւնը մեզ անհոգ ըրած է մեզի անստեղծ մը կտակելով, եւ չենք մտածեր թէ այդպէսով մեր ապագայ սերնդեան լուսոյ ճառագայթներն կը խափապագայ սերնդեան լուսոյ ճառագայթներն կը խափանենք: Տգիտութիւնը մեզ հասէր ըրած է. «Ես մեծ ըլլամ, իմ խօսքս ըլլայ ելն.» կ'ըսենք՝ առանց խորհելու թէ այդ ազգասիրութիւնն չէ, այլ անճասիրութիւն: Վերջապէս ագիտութիւնը մեզ շատ ատեն անհամաձայն ըրած է. երբ գործի մը կ'սկսինք անհաւաստի կէս ճամբան կ'երեւի ցաւալի անհամաձայնութիւն մը, այլ եւս իրարու խօսք չենք հասկնար. կատարեալ բարեկրօնական դրութիւն մը, որուն կը յաջորդէ կործանում:

Գահիրէի մէջ ԿԱՆՈՆԱՒՈՐ Լսարան-Ընթերցատուն մը (ոչ թէ քլիւպ (2)) հաստատուն պահելով, հայութեան փառքն ու պատիւն է որ կ'աւելցնենք օտարաց առջեւ:

(2) Կը սխալիք, ազնիւ պարոն: Գահիրէի համար քլիւպ մ'ունենալ աւելի յարմար է եւ պահելը՝ աւելի դիւրին քան թէ պարզ ընթերցատուն մը... ժողովրդական մարդիկներով եւ ժողովուրդի դրամով՝ Որչա'փ շիֆ երիտասարդներ, քսակին պարարտ բայց ցամքած սրտով ու թափուր՝ գլխով, հեռու հեռու պիտի ապրին մենէ, եւ երբէք չպիտի զիջանին պարզ ընթերցարանէ մը ներս օտքերնին դնելու...

Խիստ մխիթարական է տեսնել որ, արդի Լս. Ընթերցատան Գործ. Վարչութիւնը, ազնիւ ոգիներ՝ չեն վհատիր խոչնդոտներու առջեւ, ու գովելի հաստատակամութեամբ կը ջանան փայլեցնել այդ մաքուր հաստատութիւնը մերեմն անոնց կը մընայ, անընկճելի կամքով, շարունակել եւ միշտ դիմումներ ընել ժողովուրդին, զգացնելով իր ձեռնաուժութեան պէտքը :

Եւ ժողովուրդն ալ պէտք է որ զգայ իւր այդ մեծ պարտականութիւններէն մին : Նամանաւանդ հայ ծնողքներ մեծ աջակցութիւն նուիրելու են այդ գործին սպասուած նպատակին իրագործման համար, վասն զի այսպէսով իրենց երիտասարդ որդեց ըստ ըստականի ազնուացման աղբիւրներն են որ կը հաստատեն :

Շատ ցաւալի եւ ամօթալի կը լինի մեզ՝ եզիպատահայերուս, եթէ չի կարողանանք Լսարան-Ընթերցատունը փայլուն գրութեան մը մէջ դնել, որուն համար ամսական 10-12 անգլ. ոսկի բաւ է կարծեմ : (3)


ԼԵՒՈՆ ԷՍՄԵՐԵԱՆ



(3) Այս ամէնը շատ լաւ. միայն թէ յարմարագոյն կեդրոնավայր մ'ունենալու համար խօսող բերաններէ աւելի՝ պէտք ունինք գործող ձեռքերու եւ չրջուն օտքերու :

Ուսեալ եւ երիտասարդ Կիրակոս Չուլագնի կ'ուզենք մենք : (U)

Թ . Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն



Քիչ մ'աչ ժպիտ .

Աւասիկ անկէքեր պատասխան մ'աչ, որուն մեկ մեծ մասին հաւեար այնքա՛ն ազնուօրէն արեւորդ յորնուրբուն ըր յանձն առած ե բարեկամ քրքակիցը :

Պ . Երուանդ Քերկուսեան՝ իր գրութեան երգիծախառն պարունակութեամբ՝ մեզի վերջուշէր կուսայ անցեալին ընկերային կեանքի դիւրացում - կասկերգական պայքարները, եւ այն դժգոյն դերը զոր ունեցած ե այս կսկ այն յարեկպատակ ընկերութիւններու մեջ՝ անզայեղին « Մահիագիրը » :

Դասինկերով պատկազարդուելու մարեալը բնաւ ունեցած չեմք :

Կուգեիմք որ մեր շատ հաւեաս անձը՝ ի հարկին՝ քննադատուելու միայն առարկայ դառնար . բայց որովհետեւ ժողովուրդին բարեկամները միշտ չեն հաշածուիր, եւ որովհետեւ զգայուն ազգայիններ կան որոնք անխնայ ծախահարութիւններու արտառոյ ճեղք ունին, մեզի ուրեմն ուրիշ բան չի մնար ընել՝ բայց երեւ ազնիւ շրուայ, քիչ մ'աչ երգիծաբան Քերկուսեաններու հասցին շեղ յուզուած ու մեկ շարունակական բառով .

- Merci ! . . .

Ս . Օ



Կեանքի պարահանդէսի մը մէջն ես, սիրելի՛ Սեդրաք, երբ՝ առանց շունչ առնելու՝ յարաշարժ կը պարես։ Grand repos ըսուած բանը բնաւ չունի՞ս մի . . . Ինձի այնպէս կը թուի թէ՛ ամբողջ մարմինիդ մէջ ցնցող ոյժ մը կը կրես, որուն կը պարտիս բովանդակ եռուզեռուն ձգտումներդ։ Խելապատակիդ կռուանին կարծես լծորդուած նուրբ թել մը կայ, չես գիտեր ո՛ւրիկէ մղուած ելեկարական հոսանքով մը, որ ամբողջ զանգուածդ վերելար կը շարժեցնէ։

Ընթերցասիրացի, Որբասիրացի երկեակ փուլերուն մէջ՝ անխոնջ վաստակաւորի մը թաւալումներով տապալակեցար։ Ատոնք քու առանձնայատուկ կրօնքիդ երկրորդութիւնը կազմեցին. աշխատեցար, աքնեցար մասնակցելով այս երկու նուիրական հաստատութիւններու լուսահոս ջահը վառ պահողներու խումբին։ Շահագրտական նկատումներ եւ փառասիրական ձգտումներ քու մէջդ չի սնուցանելով, բարեմտութիւնդ բազխեցաւ անխուսափելի խոչնդոտներու, հակառակորդներու որոնք քեզ . . . փորձեցին։ Ոգի ի բռին աշխատեցար զանոնք ուղիղ ճամբուն մէջ դնելու, եւ մասամբ ալ յաջողեցար։

Ու այս ամբողջէն գոհ չի մնացիր։ Ուաքով գըլխով նետուեցար Լսարան-ընթերցատան մէջ, հերոս ծրագիրներու մասնակցած ըլլալու բնագլղով։

Աւա՛ղ . . . ամբողջ խնդումդ յանկարծ փորդ մնաց։ Յամքած դէմքիդ վրայ ցոլացող ահաւոր ժըպիտը մարեցաւ, ու նախկին ոսկի զուարթութիւնդ

կորսնցուցիր։ Հրարուխ մը ծագում առած էր ներսի գիդ՝ որովհետեւ կառավարական պաշտօնով ստիպուած էիր հեռանալ եգիպտական ոստանէն . . . մինչ հոս տեւտոնական պատերազմը կը շարունակուէր։

Անցան ամիսներ, բացակայութիւնդ բան մը պակսեցուցած չէր հրապարակի տագնապէն։ Արժանաւոր Հերակլէսներդ անդուլ անդադար կը մղէին սկսուած պայքարը։ Դժոխային խաժամուժի մը մէջ, Սադայէլի հարազատ սաներու ոռնացումները կարծես մեր ականջին թմրուկը պիտի պատռէին։ Բարելոնի աշտարակաշինութեան հեռանկարը տակաւ պարզուած էր «անամալի»ի մայրաքաղաքին պայծառ հորիզոնին վրայ։ Օնորէ աը Պալաք, Բօլ աը Քօք, Մօլիէր, Պարոնեան, իրենց յաւիտենական խոր քունէն սթուփած, երգիծանքի տժգոյն լոյս մը սփռել փորձեցին հոս։

Այս ամէնը բաւական չէր, եւ ահա, խաւարակուռն Ափրիկէի խորէն, «Սուտանցի»ի մը սրտաբուխ «A bon entendeur, salut»ի վայրագ արձագանքը կուգար կրկին յուզել արդէն գերագրգռուած, ու քիչ մը հանդարտելու կարօտ, մաքերը։

Վերազարձիդ՝ ամէն բան վարդազոյն չի գտար, խեղճ Սեդրաք։ Ունեցար դառն յուսավրիպումներ, որոնք զգուանք աւթեցին զգայնոտ սրտիդ. ծիծաղէն սոսկացիր ու ժպիտը արհամարհեցիր։ Բոլոր գործերէ քաշուելով ուզեցիր պատուաւոր չեզոքութիւն մը վայելել, եւ «Ինչո՞ւ կը հեռանամ» շընդալից յօդուածովդ սրտաշարժ հրաժեշտ մը կուտայիր հրապարակին . A bon entendeur, salut! . . .

Բայց դուն վատութեան համար ստեղծուած չես, ո՛վ սքանչելի աղայ. . . բարեկամներուդ կողմէ քեզի վերագրուած վատութիւն մը չի գործել ու Լսարան-Ընթերցատունը որք չի ձգելու ազնիւ համակերպու- մով՝ ետ առիւր անդառնալի հրաժեշտդ . . .

* * *

. . . Մէֆիստոֆէլ մ'էիբ ալ հիմա : Գահիրէի հրապարակներուն վրայ, փողոցները, տունները, խա- նութները, սրճարանները, պահերը եւ ուր որ կ'եր- թայինք՝ անպատճառ մեր դէմը պիտի ելլէիր, զըր- պանդ նուէրատոմսի արցակով մը, «Աստուծոյ բա- րեւ»ին անմիջապէս կցելով ի նպաստ Լսարան-Ըն- թերցատան 5 կամ 10 դահեկանի ամսավճարը :

Ալ ամէն տարակոյս փարատեցաւ : Կատարելա- պէս համոզուեցանք թէ Քրիստոս աշխարհ եկաւ մարդկային ազգը փրկելու, իսկ դուն ալ ծնար Գա- հիրէի թմրած հայութեան երկրորդ նախախնամու- թիւն մ'ըլլալու սրբազան պաշտօնով (1), որմէ մը- ղուած եւ Գահիրէցիներու հաճոյալի կաղանդի օր մ'անցնել տալու համար՝ չորս ընկերային հարցում- ներ հրապարակ կը նետես :

Բնաւ կասկած չունիմ, սիրելի՛ Սեդրաք, թէ պիտի դայ օր մը — եւ այն ալ թերեւս մօտ ըլլալու է — որ աշխարհի բոլոր լսարանական ընկերութիւն-

(1). ' ' ' .

ները հաւաքելով՝ սեկսիֆա մը կազմակերպելու յան- դուգն ծրագիրն ալ պիտի յղանաս :

Այդ փառքը սրտանց քեզի կը մաղթեմ (2) ու ամառորի ուրիշ լաւագոյն բարեմաղթութիւններու հետ կը փութամ պատասխանել երկու հարցումներուդ միայն, գրութիւնս ձանձրացուցիչ չընելու՝ նախա- հոգութեամբ :

3. Ինչո՞ւ այս նպատակաւ ի գործ դրուած ջան- քեր բաղձացուած արդիւնքը ունեցած չեն :

— Ահա հարցում մ'որուն պատասխանը եղական սեւ էջ մը գրաւելու հանգամանքը ունեցած է եգիպ- տահայ տարեգրութեանց մէջ : Պատճառներու տխուր քռուռն մատուցը կարելի չէ ամփոփել այս անցուկ էջերուն մէջ : Համբերատար աշխատութեան գործ մ'է այն, որը գլուխ հանելու համար վեցհազարեակը թղթատած ըլլալու է մարդ :

Փառասիրական ձգտում, շահադիտական նկա- տում եւ շնական ձեռնպահութիւն. անա ասոնք ե- ղած են կարծեմ այն աղբիւրի չարեացը, որոնք Լսա- րան-Ընթերցատան յարատեւ յառաջդիմութեան դէմ խոչնդոտներ յարուցած են : Առաջին երկուքը անբա- ժան եղած են՝ սովորաբար՝ մեր բոլոր բարենպա- տակ հաստատութեանց մէջ : Մեր նպատակը, հոս, անցեալի տխուր յիշատակները քրքրել չէ. եթէ քըր-

(2) Կը վստիստեմ, չարամնի Երուսեղ, որ մեռնելի առաջ այդ փառքը չի վայելել, ու «Մուրաւս» փոռս մնայ . . .

քրեւ պէտք ըլլար՝ մէկէ աւելի անհնարութիւններ վիրաւորելու հարկին մէջ պիտի գտնուէինք, ինչ որ հաճելի բան մը չէ մեզի համար :

Շնական ձեռնպահութեան խտէն վարակուածները, կը ցաւինք ըսել, դարչելի մեծամասնութիւն մը կը կազմեն, ու իրերը միայն հետուէն դիտելով կը դոհանան, առանց իրենց աշխատութեան որոշ բաժինն ունենալու. որ եւ է բարենպասակ ձեռնարկներու մէջ: Եզրիպտահայ դաղթականութեան թիւը հետզհետէ պատկառելի կերպարանք մ'առած ըլլալով՝ միջավայրին պահանջները համեմատաբար շատ ուշատ են: Երբ ուրեմն աշխատող ձեռքերը կը պակսին, ձեռնարկուած գործը բնականօրէն շուտ կը վիժի, ու անկումը կանխահաս կ'ըլլայ:

4. Ի՞նչ աւելին կը սպասուի վարչութիւնէդ, եւ ի՞նչ ընելու է ժողովուրդը՝ ինք:

— «Լսարան-Ընթերցատուն»էն կը պահանջուի, ամէն բանէ առաջ, օրինաւոր վարչութիւն մը: Կսով չեմ ուզեր ըսել որ արդի վարչութիւնը ապօրինի կամ անչնորհք է, քա՛ւ լիցի: Յանձնարարելի աւնուն մը, ազգային կեանքի գիտակցութիւն, քիչ մը մը դիրքի տէր՝ մաքուր բարոյականով, քիչ մ'ալ երկրորդական ուսում կամ ճշմարիտ դարգացում, մին միւսին չափ անհրաժեշտ է Լսարանի վարչութեան մը համար, որպէս զի կարենայ իր ստանձնած ծանր պաշտօնը ձեռնհասօրէն եւ արժանաւորապէս կատարել:

Աւելորդ է ըսել թէ՛ ի՞նչ չափով մտաւորական կարողութիւն որ կը պահանջուի լսարանական ըն-

կերութեան՝ մը վարիչ մարմինէն, նոյնը բնականաբար չի պահանջուիր Աղքատախնամի կամ Որբախընամի անդամներէն:

Հարկ անհրաժեշտ է ուրեմն ջանալ Լսարանի վարչութեան ղէկը յանձնելու կարող եւ ձեռնհաս անձնաւորութիւններու (3):

Թէ ի՞նչ ընելու է ժողովուրդը:

— Ժողովուրդը պէտք է որ, նախ, Վենետիկի «Հայկազեան» բառարաններուն մէջ՝ լաւ մը ուսումնասիրէ լսարան ընթերցատուն բառերուն ստուգաբանական նշանակութիւնը, սերտէ անոնց հոգեբանութիւնը 8-10 օր, ու այնուհետեւ ընէ ինչ որ հարկ պիտի սեպէ ընել:


ԵՐՈՒԱՆԴ ՔԵՐԷՍԷՅԶԵԱՆ



(3) Ի՞նչ որ մենք ըսած ենք, շատ անգամ բարեկամական շրջանակներու մէջ անձնասիրութիւններ վիրաւորելու անփոյթութիւնն ունենալով:

Մարդ չկայ, երիտասարդութիւն գրեթէ չունինք. ի՞նչ ընել, Աստուած իմ, faute de mieux. Գրական Մասնաճիւղս պիտի չուշանայ, կը սիրենք հաւատալ, լրացնել այս սիրտ ճմլող պակասը:

ժ . Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն



Թոյլ տուէք (1) որ համառօտաբար պատասխանեմ ձեր չորս հարցերուն :

1 . Ժողովրդային անանկ հաստատութիւն մը , ինչպէս է Լսարան Ընթերցատունը , երբ իւր գոյութեան իրաւունքը կոչմանը արժանաւորութեանը մէջ կը փնտռէ՝ ի հարկ է մեծ կարեւորութիւն ունի Եգիպտահայերու համար :

2 . Երբ առողջ միաքը կը յորդի՝ այն ատեն հայ եղբայրներ աւելի դիւրաւ իրար ձեռք տալով վերածննդեան յոյսը նոր թափով մը կ'արթնցնեն , եւ մեր մոլորած քայլերը առաջնորդելով դէպ ի գործ , դէպ ի զոհողութեան ոգի եւ դէպ ի կեանք , ազգին փրկութեան գործը աւելի լաւ կը ճառագայթէ խոպանացած սրտերու ու մտքերու վրայ :

3 . Ծառը իւր պտուղէն կը ճանչցուի : Մպասուած արդիւնքին ուշանալը կը մատնէ կամ գործող-

(1) Յօժարակամ , տիկի'ն : կը փափաքինք ալ , որ ձեր համարձակութենէն օրինակ առնեն մեր վարժուհիները , մեր ամէն կարգի արմէնուհիները չըսելու համար :

ներու խակութիւնը եւ կամ խիստ նուազութիւնը : « Ինչ որ ցանէք նոյնը կը հնձէք » : Ժողովուրդները առաջնորդելէ առաջ մարդիկ սորվելու են նախ ինքզինքնին կառավարել . մարդը պաշտօնին տուէք եւ ոչ թէ պաշտօնը՝ մարդուն : (2)

4 . Երբ վարչութիւնը կը բազմապատկէ իւր ջանքերը , սիրով անարատ ոգւով կը փարի իւր գործին բարձրութեանը , այն ատեն հաւատքի դոնները

(2) Երանի՛ հողւով արթուններուն՝ զի հողի առաւել է քան զմարմին :

Եթէ միայն բարեպաշտուհի տիկի'նը ամէն բան հողուոյ աչքով չի դիտէր , տարակոյս չունիմ որ՝ իր պատասխանը պիտի ունենար նուազ անաչառ , նըուազ ստոյիկեան պարունակութիւն մը , լոկ անուսով քրիստոնեայ մեղաւոր մահկանացուներու այլապէս հաճելի :

Երբ չարին միշտ հակամէտ մարդ մը չուզիր Տե'րոջը շաղիւն մէջ ընթանալ՝ ի'նչ է , Տիկի'ն , քարոզիչ - պատուելիին յանցանքը :

Եւ կամ՝ ճամբուղ վրայ , սրճարանի մը մէջ , թռքախտաւճր հիւանդի մը կը հանդիպիս : Բժշկական համալսարաններու շատ ծառայած չես բայց , այսպէս կամ այնպէս , թռքախտը մասնագիտութիւնդ եղած է : Անարժաք բժիշկ կըլլաս , Պալեանի բառով : կը գթաս խեղճ հիւանդին . կը մօտենաս , կը մտեմանաս : Իրեն մարդասիրաբար կը յանձնարարես որ հեռանայ այդ վատաողջ վայրէն , չի ծխէ , չի խմէ ,

աւելի լայն բացուելով՝ ժողովուրդներէն ակնկալուածը չ'ուշանար — խօսք չէ : ժողովուրդներուն մը առջին մակարդակը բարձրացնելու դերը ստանձնողները ունենալու են զօհողութեան անհուն ոգի, եւ ատոր ալ կիրարկման ատակ մարդիկ ըլլալով :

Առանց ասոր՝ լաւ կընէք եթէ ձեր ռեֆրանը նեղոսի լայն եւ միապաղաղ թերթերով հրատարակէք :
Ձեր յաջողութեան փափաքող

ՏԻԿԻՆ Օ . ԹՈՒՄԱՆԵԱՆ

մաքուր օդ ու մաքուր սնունդ առնէ. եւ երբ յ իմար հիւանդը կրկին բուրբովին հակառակը կընէ՝ ի՞նչ է Տիկի՛ն, Անարժաք բժիշկին յանցանքը . . .

Աշխարհաքաղաքացիութի՛ւն , անամալի՛ voila l'ennemi . կրկնակառուցութի՛ւն , ահա մեր ընկերային կեանքի հիւժախը :

— « Մարդը պաշտօնին տուէք եւ ոչ թէ պաշտօնը՝ մարդուն. աւետարանանման առած մը, որուն վրայ սակայն կարժէ որ խորհրդածին ժողովուրդներու զըլուխները, արծաթապաշտ կեղծ քահանաները , ու սուցիչները , խմբագիրները եւ այլն : (Ս)



ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ

(ՆԿԱՐԻՉ)

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ

(ՆԿԱՐԻՉ)

Ծնած է Պոլիս, 1870 ին :

Նախնական ուսումը առած է Պոլսոյ հայ վարժարաններու մէջ : 1885 ին աշակերտ դառնալով է գեղարուեստի կառավարական վարժարանին, որուն հիմնադրութեան ցարձաքը շրջանացած՝ շրջանաւարտ եղած է առաջին prixով :

1893 ին Փարիզ գացած ու նկարչութեան ծանայած է J. Paul Laurens եւ Benjamin Constant հռչակաւոր վարպետներուն հետ :

1894 ի վերջերք Պոլիս վերադարձած է : 1895 էն, Հայուն Մեծ-Աղէտին հետեւանալով, գաղթած է Կահիրէ՝ միշտ հետեւելով իր պաշտած ասպարէզին, որուն մէջ բնածին յաջողակութիւններ ցոյց կուտայ, ու գնահատուած է միւլիսի ներքաճաշակ երոպացիներէ :

Աշխո՛ւս որ, մեր մէջ, շատ քան եւ մեծ ապագայ խոստացող երուանդ Տեմիրճեաններ պիտի ճակատագրականօրէն հայ Տեմիրճեաններ մնան, որովհետեւ հայ մեկեւաւտներ պիտի պակսին :

ԺԱ . Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Ահաւասիկ , եթէ յարմար դատէք , իմ ալ խոնարհ կարծիքը , իբր պատասխան ձեր հարցերուն :

Ա. — Եթէ կայ երկիր մը , հայ զաղութի հոսանքովը ողողուն , որը ունենայ ամենէն աւելի պէտքը Լսարան-Ընթերցատան մը , աներկբայ եւ թէ Երկրպետն է այդ , սա ակներեւ պատճառով որ ան էն ազատ վայրն է , ուր գերիներու օղակը տարիներով վիզը տարած ըլլալու դժբախտութիւնն ունեցող ժողովուրդ մը , ամենէն աւելի ենթակայ է զինքը սեղմօրէն շրջապատող ահուկի եւ մահարեւ առիթներէն ապականուելու եւ մահանալու :

Բ. — Կառք մը պիտի ըլլայ ան՝ երկնքի լոյսերովը շողշողուն , որուն լծուած փրփրերախ երկվարները պիտի սուրացնեն զայն , հալածելով ու դահաւէմ ընելով խաւարը : Անոր հետքը փայլուն պիտի ըլլայ ու փառասոր , իր շուղին ամբողջ երկայնութեանը վրայ զծելով ազուր լոյս մը ճերմակ՝ որուն ցուրդը պիտի գոյ ճառագայթել անհատին ճակատին վրայ , ուրկէ թափանցելով ներքին խաւերու մէջ՝ պիտի ծիրաներփնէ հոն ճշմարիտ շողով մը , ու առաջնորդէ անոր էութիւնը համակ զէպի կեանքի

բարձր հորիզոնը : Ու հոն պիտի մատնանիշուի անշքբարեւոր կերկարի տարածուն , պայծառին ու նըսեմին , գեղեցկին ու աղեղին , բարձրին ու ցածին մէջ :

Գ. — Գործ մը որ չի յաջողիր , պատճառ մ'ունի . պատճառ մը կայ անշուշտ երբ մեքենան չի բանիր : Ուստի փնտռել այդ պատճառը :

Փնտռել Ա. — Թէ մեքենան իր ճիշտ պէտք եղած սեղը հաստատուած է : Բ. — Թէ կատարելալ են իր ամեն մէկ մասերը , զատ զատ : Գ. — Թէ այդ ամէն մէկ մասերը իրարու կապելու արուեստին ճարտարութիւնը անթերի կերպով 'ի գործ դրուած է : Վերջապէս Դ. — Թէ իր սնունդը , իւրը բաւականաչափ կը մատակարարուի՞ իրեն :

Արդ , եթէ սոյն չորս անհրաժեշտ պէտքերէն մին միայն զլացուի , չպիտի քալէ մեքենան , հակառակ քրտինքի խոշոր կայլակներով ողողուն ճակատներու , հակառակ պայթելու չափ ուռած երակներու մէջ զեսուն արիւնի մը խօլ վաղքերուն , հակառակ կատաղութեան պրկուած անդամներու հոս հոն ջախջախուելուն :

Ու դիմացդ , միշտ դիմացդ պիտի ցցուի ան , ուրուականի մը՝ պէս պող եւ անագորոյն :

Դ. — Մեծ պիտի ըլլայ անոր արձակած լոյսը համեստ գանկերու վրայ , երբ բաց ի կենսական հարցերու վրայ հիմնուած , շեշտակի ու պարզօրէն բուն իսկ վէրքերը նշգրտակող օգտաշատ ատենախօսութիւններէ , շտապէ ունենալ դասեր , կիրակնօրեայ կամ քիչերային , վճիտ լեզուին մայրենի , ապագային՝

օտար լեզուներու ալ, առողջաբանութեան, արուեստ-
ներու եւայլն:

Եւ հոն՝ բան մը ընդունող անհատը, կամ անոր
եղբայրը, ըլլայ ան մարդերու յետինը, չպիտի
կրնայ անտարբեր մնալ. ու իր ամենէն յանդուգն
ճիւղերը, ամենէն անկարելի զոհողութիւնները պիտի
թափէ՝ իր երկու ձեռքերը մէկէն կարկառելով, զայն
կանգուն պահելու վսեմ գործին մէջ:

Օգնէ՛, օգնէ՛ ի՛նչ կերպով որ կ'ուզես, եւ ի՛նչ
չափով որ կրնաս:

Ու անհատը, եղբայրդ, սրտին խորէն պիտի
սիրէ քեզ, ժողովուրդդ ոգիով ու եռանդով պիտի
ծափահարէ քեզ, եւ Ազգդ երախտագէտ պիտի ըլլայ:

Կուզե՞ս որ Ազգը ապրի:

Անհատը ապրեցուր: Զօրացո՛ւր զանի, տալով
անոր Աշխատքիւնը (Ֆիզիքականը): Մաքրէ՛ սրբէ՛
զանի, տալով անոր Աշխատքիւնը (բարոյականը):

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ

* * *

Բաց ի բանաստեղծներէն՝ ոչ ոք, աւելի քան
Երուանդ Տէմիրճեան, պիտի իրաւունք ունենար
գրչով ու վրձինով պատկերացնելու իսկապէս — վսեմ ու
ազգայէն — Լոսարան-Բնութեցատան:

Եթէ Ե. Տէմիրճեան քիչ մ'աւելի հայագէտ ծնած
ըլլար, իրժով պիտի ողջունէինք Եգիպտահայերու
Արչակ Զօպանեանը:

* * *

Մեր այսօրուան կենդանի laureatներու հետ ու-
զած էինք նաև ունենալ եգիպտահայ գեղեցիկ սե-
ռին արժանատի ներկայացուցիչ՝ Օր. Մառի Պէյլէր-
եանի լուսանկարը: Կը ցաւինք սակայն ըսել թէ,
հակառակ մեր կրկնակի դիմումներուն, Արսկախի հա-
մակրելի խմբագրուհին մեզի պատասխանեց անբաղ-
ձալի լուծեամբ մը, որ դեռ խորհրդաւոր կը մնայ
մեզի համար:

Յովհաննէս Սէթեանի հեղահամբոյր բնաւորու-
թիւնը առակի կարգ անցած ըլլալու է զինքը ճանչ-
ցողներուն ըով: Ե. Տէմիրճեանի գեղարուեստական
եւ գրական արժանիքին հետ համեստութեանը վրայ,
զաղափար մը տալու համար՝ անխոհեմութիւն մը
ըրած ըլլալ չենք կարծեր, իր թախանձանքին վրայ,
հրատարակելով հետեւեալ սիրուն նամակը, արուես-
տագէտի մը նուրբ ու զգայուն վրձինովը գրուած:
Տափակ գրիչ մը իր շնորհակալութեան գիրը պիտի
սկսէր շողշողուն ածականներով. Ե. Տէմիրճեան,
հակառակ ազգին յէսին սնկասը ըլլալուն, կը գործա-
ծէ չոր ու ցամաք տիպոս մը, որուն գաղանխքը
քիչերու միայն տրուած է ըմբոշխնել:

Պառն'ն,

Անհուն է յուզումս որքան սնասնուն՝ շնորհա-
կաշարիւններս, այն սննունտապիս մեծ պատիւն համար
որով այնքան շուայրեմ, գրեթէ բռնի, կը փայտեմք
սզգին յէսին սնկասը, իր արուեստագէտի խիստ սոցոս
սուսնեւուն մեք, զորս սզգային յատաշղիտութեան նշոյ-

ներուն հաւար ձեր պատրաստ խոշորացոյցովը դիտելու
ազնիւ անխոհեմութիւնը ունիք :

Ընդունեցիք ուրեմն, պարո՛ն. խորին յարգանքներս
որով կը մնաւ ձեզի երախտապարս :

Ե. ՏԷՄԻՐՃԵԱՆ

Գրական մասնաձիւղս կը փութայ իր փոխա-
դարձ երախտագիտութիւնը յայտնել ազգին յետին ան-
հասիւն, որ ազգասիրաբար պատրաստած է Լսարան-Ըն-
թերցատան խորհրդանշանը, հիանալի կողմ մը՝ զոր
պիտի վերապահենք մեր յաջորդ հրատարակութիւն
«Արմաւենի»-ի համար :

Ուրախութեամբ կը ծանուցանենք որ գրքոյկիս
հինգերորդ պրակին հետ՝ Ալեքսանդրիոյ «Արաքս»
տպարանէն լոյս տեսաւ «Ժողովուրդ» ամսաթիւրթ մը,
լոյ ջննաախրական, խմբագրութեամբ ծանօթ հրա-
պարակագիր Ա. Պալեանի. որուն մէկ շահեկան եւ
խորիմաստ պատասխանը անշուշտ հաճոյքով պիտի
կարդացուի գրքոյկիս մէջ :

«Ժողովուրդ» մեծ թերութիւն մ'ունի, այն է՝
շտա սահմանափակ ծուարը :

Ընթերցատէր հասարակութեան թողլով անոր
ծաւալին մեծութիւնը, Գրական Մասնաձիւղս «Ժո-
ղովուրդ»ին չի մաղթեր այն երկարակեցութիւնը, որ
կարծես անխուսափելի դարձած է արտասահմանի մեր
կարգ մը կենդանի-Ֆեռեալ թերթերուն :

ԼՍԱՐԱՆ – ԸՆԹԵՐՅՍՏՈՒՆ

(Պաշտօնական յայտարարութիւն)

Նկատելով որ Ընկերութեանս վերաբերեալ այլ-
եւայլ գործերը աստիճանաբար բազմանալու սրտա-
պընդող հանգամանք մը կ'առնեն, Վարչութիւնս յար-
մար դատած է աշխատութիւնները երկուքի բաժնել՝
Լսարանի համար մասնաւոր ճիւղ մը ստեղծելով :

Լսարանը՝ միշտ մնալով բնականաբար համա-
րատու մարմին մը հանդէպ Ընթերցարանի վարչու-
թեան, յանձնուած է նորակազմ գրական մասնա-
ճիւղին, որուն առժամեայ ներկայացուցիչն է մեր
սիրելի պաշտօնակից եւ իր հանրային գործունէ-
ութեամբը արդէն ծանօթ՝ Տ. Ս. Օտապաչեանի :

Օգտուելով «Հարց-Պատասխան»ներու հրատա-
րակութեան զեղեցիկ առիթէն, վարչութիւնս կու-
գայ իր շնորհակալիքը յայտնել հետեւեալ նուիրա-
տութիւններուն համար .

Գեր. Այվազեան Սրբազան . — Սուրհանդակ,
Մասիս եւ Արեւ. Մամուլ :

Մեծ. Տեարք

Արամ Փափազեան . — Journal du Caire եւ Pro
Armenia :

Գէորգ Թովալեան . — Բազմավէպ :

Հունկ , լրագրավաճառ . — Երեք ֆրանսերէն պատկերազարդ թերթեր :

Ա. Լալանան , Աղեք . — Փիւնիկ :

Աշգեան Եղբարք . — Շարժում :

Կարապետ Մեսրոպեան . — Հայ Հանդէս :

Շաւարշ Շիշմանեան . — Ձայն Հայրենեաց :

Ս . Օտապաշեան . — Les Annales Pol. et Littéraires :

Արժ . Մինաս Վարդապետ Նշանեան . — Արտէմիս Ուղղակի Խմբագրութիւններու կողմէ՛ Արշալոյս , l'Arménie , Արմէնիա , Անահիտ , Լոյս , Ազատ Խօսք եւ « Ժողովուրդ » :

Վարչութիւնս շնորհապարտ պիտի մնայ այն բարեսէր ազգայիններուն որոնք հայերէն , ֆրանսերէն , անգլիերէն եւ արաբերէն թերթեր կամ զրքեր ընթերցարանիս նուիրելու բարեհաճութիւնը կ'ունենան :

Ընթերցատանս մէջ կը ծախուի Մարտէյի « Արմէնիա » ի տպարանէն լոյս տեսած ինչպէս եւ Մ . Փորթուզալեանի հեղինակած հետեւեալ գրքերը :

| | | |
|----------------------------------|--------|----------|
| Արմէնիա յուշարար | 1 ֆր . | 40 սնթ . |
| Մի Պուլկար հայրենասէր | 1 » | 40 » |
| Թիւրքիայի Հայերն | | 50 » |
| Հայաստանի թշուառներ | 1 » | 20 » |
| Իմ հայրասպան Ընկերը | 1 » | |
| Կսկծանք | | 30 » |
| Վրէժ | | 20 » |
| Թովմաս Բոցարիս | | 20 » |
| Նմոյշներ Մ . Փ . ի ոտանաւորներէն | | 15 » |

Ամէն անոնք որոնք Պ . Մ . Փորթուզալեանի վերջերս Եգիպտական Թատրոնին մէջ արտասանած բանախօսութեան ընթացքում սպաւորութիւնը կը կրեն , թող փութան զործնականապէս գնահատել բազմախառ գործիչին երկարամեայ գործունէութիւնը՝ գէթ մէկ մէկ հատ գնելով յիշեալ գրքոյկներէն :

Վարչութիւն Լս . Ընթերցատան

Ասեւնապիտ

Ասեւնապէս

Տ . ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՇԱԽԱՐՇ ՇԻՇՄԱՆԵԱՆ

ԺԲ . Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Հայկայ Բաշարի քոռնունի վր

Ի՞նչ կ'ուզէք , սատանի սիրուն , ո՛վ զուարթախոհ երիտասարդ , խեղճ ազջիկէ մը : Կը պնդէք ու կը պնդէք որ շատ տկար գրչովս բան մը գրեմ , առանց աչքի առջիւ ունենալու հանրութեան « Ի՞նչ պիտի ըսեն »ը , եւ առանց մտաբերելու թէ , մեր մէջ , տխմար նախապաշարումով մը , աղէկ աչքով չի նայուիր կնկան մը կամ օրիորդի մը՝ որ հրապարակ կը նետուի :

Բայց որովհետեւ եգիպտանայ գեղեցիկ սեռը այսօր ունի իր օղկանը , ինչ որ կը նշանակէ թէ նախապաշարումի երանելի դարը անցած է բարեբախ-

տաքար՝ հետեւաբար ինծի պէս աղջկան մը պատիւ կը համարիմ հրապարակ գալով, մանաւանդ որ կարծ խելքովս պիտի պատասխանեմ այնպիսի հարցերու, որոնք մեզ կատարելութեան հասցնելու սրտագրաւ հանդամանքը ունին:

Ա. «Պէ՞տք է որ Լսարան-Ընթերցատուն մ'ուսնենանք»:

Չեմ գիտեր երիկ մարդերուդ համար, Բարեգործական Ընկերութեան սրճարանը, Քաֆէ Շիշան, Քաֆէ Էնփէրիալը, Կեսարացիներու պղտփկ Էրճիասը, օտար սրճարանները, պառեւը եւ այլն՝ բաւական չե՞ն մի կենցաղասէր, ազատ ու սանձարձակ երիտասարդներուդ համար:

«Արշալոյս» լրագրին հաւաքածուն ձեռքի տակ չունիմ: Լաւ կը յիշեմ միայն ինչ որ այդ թերթին առաջին տարուան մէկ թիւին մէջ կը գրէիք՝ Օր. Եւքարիսիդ ուղղած ձեր մէկ նաղելի բաց նամակովը: Ընտանեկան այցելութեան մը առթիւ՝ հայ կին մը -Արարկիրցի կին մը, հրա՞չք է թէ իրողութիւնը դուարձախօս ոէքլամասէր բերնէդ իմանալով Քլիւպի մը գոյութիւնը Գահիրէի մէջ, կը զարմանայ, կը զմայլի, կը շլանայ, խանդավառ շեշտերով յայտարարելով թէ ինք ալ կուզէ սրճարան մը (զուք ըսէք Քլիւպ մը) բանալ հայ կիներուն համար. . . :

Ո՞ւր մնաց, ըսէ՛ք կաղաչեմ, պարոն, այդ գաւառացի հերոսուհին: Եթէ անպատճառ պէտք է որ Ընթերցատուն մ'ուսնենաք, կուզեմ որ այդ քաջ կինը կրկին երեւան գայ, եւ ի ձայն փողոյ պահանջէ որ Ընթերցատան մէջ հայ կիներս ալ ունե-

նանք մեր առանձնայատուկ ժողովրդավայրը՝ որովհետեւ հայ ծնած երեք վերջապէս, եւ մեր տոհմային բարքերը մեզի չեն ներեր դեռ որ ամէն պարագաներու մէջ հաշտ ապրինք Հարածճի երիտասարդներուդ հետ: Ժողովրդատեղի մը ուր կարենայինք զիրար ճանչնալ, կարծիքներ փոխանակել, ու սորվել — սա խեղճուկրակ դաւառացի կիները մանաւանդ — թէ ի՞նչպէս պէտք է խօսիլ, ի՞նչպէս հագուիլ, ի՞նչպէս . . . քալել: Եկեղեցիին մէջ չէ որ պիտի սորվէինք ապրելու այս տարրական գիտելիքները:

Չ. «Անորմէ առաջ եկած օգուտները, ազգային թէ բարոյական»:

Յիսո՛ւս-Մարիամ՝ շատ տխմար ըլլալու է մարդ այսչափ բան չի հասկնալու համար: Սրճարանէ մը կամ ընթերցատունէ մը ներս մտէք, ու անմիջապէս պիտի հասկնաք ազգայինի թէ բարոյականի տարրերութիւնը: Իրաւի տխմարներ են անոնք, որ Լսարան-Ընթերցատան ն'ան ազգայէն հաստատութեան մը յարգը չեն գիտեր:

Յ. «Ինչո՞ւ այս նշատակաւ ի գործ դրուած ջանքերը բաղձացուած արդիւնքը չեն ունեցած»:

Ի՛նչ, որովհետեւ սալուկ ազգ մ'ենք, եւ մեր նախնիքներէն գարշելի բան մը փոխանցուած է մեզի: Անմիաբանութիւն, մայր ամենայն չարեաց:

Որովհետեւ կառավարող զլուխ չունինք, ու թափառական ժողովուրդ մ'եղանք:

Որովհետեւ չէնք շնորհք առաջնորդ չունինք: Մեր այսօրուան Սրբ. Լուսնորդը ծերուկ մարդ մ'է, որմէ աւելին սպասել յիմարութիւն է:

Որովհետեւ չէնք շնորհք քահանաներ չունինք : Մեր քահանաները Յիսուսի ձկնորս աշակերտները են , Հոգւոյն Սրբոյ գալուստէն առաջ :

Որովհետեւ վարժարան չունինք : Մե'ղք հոստեղի վարժարանին համար ծախսուած կարմրուկ ոսկիներուն :

Նռանդուն ուսուցիչներ չունինք : Եգիպտահայերու համար գանուածներն ալ շատ են : Tel maître , tel valet :

Որովհետեւ միջավայրը աննպաստ է , եւ ժողովուրդը - տարբեր տարբեր գաւառներէ խառնուրդ մը - անտարբեր է կամ սրճարանամուկ :

Որովհետեւ հրաշքի դարը անցած է , եւ Գալըստեաններ երկրորդ անգամ աշխարհ չպիտի գան : Սըրտով հարուստներ չունինք :

Որովհետեւ մեր տանկլուխ պապերը , մեր ցընդած մայրերը , քաջազն Պօէր կիներու նման , ձախաւելով հայրենասիրութիւն քարոզած չեն մեզի :

Որովհետեւ ազգեցիկ մամուլ չունինք :

Որովհետեւ մեր ժողովուրդին մեծամասնութիւնը պարտաճանաչ չէ : Աջով կուտայ՝ առանց ձախը գիտնալու թէ ինչի՞ կուտայ : Երեք ամիս պիտի տայ , չորրորդին վազ անցնելու համար :

Որովհետեւ մեր ընկերութիւններուն մէջ գործողները գրեթէ միշտ միեւնոյն անհասները կ'ըլլան : Անոնք ալ մարդ են , կը ձանձրանան , կը վհատին :

Որովհետեւ աւելի կանոնադրի յօդուածներով կը հետաքրքրուինք , եւ երբ կարգը կուգայ այդ յօդ-

ուածներու գործադրութեան , ամէն մարդ նեղիւնի շաղըն պիտի ըսէ ինքնիրենը :

Որովհետեւ երբ մին կը շինէ , միւսը քանդել կը ջանայ :

Որովհետեւ , որովհետեւ , որովհետեւ . . . զո՞րն ասեմ եւ զո՞րն խոստովանիմ :

Մնացեալը ընթերցողներուն կը թողում , մաղթելով որ ամէն մարդ իր բաժինը վրան առնէ ու խրատուի :

4. Ժողովուրդին օգտին համար ծառայողներէ կը սպասուի ամէն կարգի զոհողութիւն , նիւթական , բարոյական թէ մտաւորական : Ասարանի վարչութիւնը պէտք է որ ըլլայ ժողովրդասէր բայց միապետական : Մեր մէջ ժողովրդային ըսելով՝ անիշխանականութիւն հասկնալու ենք :

Հինը աւերեցէք , քսնդեցէք , նորին տեղ տալու համար :

Իսկ ժողովուրդին կը մնայ շինել՝ ինչ որ դուք կը քանդէք :

ՕՐ . Մ . Կ . ՄԵՍՐՈՊԵԱՆ

Վ Ր Ի Պ Ա Կ

- 0 -

| | ՍԽԱԼ | ՈՒՂԻՂ |
|---------------|-----------------|-----------|
| 1 րդ Երես տող | 18 . — հեռաստան | հեռատան |
| 3 4 » » » | 6 . — անկիջօրեկ | անմեղօրէն |
| 69 » » » | 7 . — դժգոյն | սփոյն |

ԼՍԱՐԱՆ



Արեւը ծագած է :

Խաւարը կը փարատի :

Կեանքը կը վերանորոգի , երիտասարդութեան խանդովը բորբոքուն :

Լսարանի շէմքէն ներս մտած ես հիմա : Փոխուած ես , ճառագայթի ու զեփիւռի մէջ կօրօրուիս՝ մաքուր մթնոլորտի մը տակ : Կը զգաս թէ Լսարանը հասուն մարդկութեան վարժարանն է , ուր պիտի բեղմնաւորի ապագան : Հոն կը տեսնես ժողովուրդը , մարդկութեան ստուար եւ պատկառելի ներկայացուցիչը , նստած կարգաւ , լռիկ մնջիկ :

Բեմը բարձրացած է ատենաբանը , վեհ կեցուածքով ու խորութեամբանց նայուածքով :

Կամարները կը թնդան ունկնդիրներու մեծազղղորդ ծափերովն ու կեցցէներով :

Ատենաբանը հանրային վերքերը կը բանայ հանրութեան առջեւ , կարթնցնէ հանրային կարծիքը , կը յուզէ , կը ցնցէ զայն : Ազգ մը ամբողջ՝ հոն համախմբուած , մէկ սիրա , մէկ հոգի , մէկ հաւատք , կը վայելէ եղբայրութեան , հաւասարութեան եւ ազատութեան բարիքները , ու մտքերը կը բացուին ,

կը զարգանան , ազգային , քաղաքական , ընկերային , գրական ու գիտական նիւթեր համադասնեցու պէս լափելով :

Ո՛վ պաշտելի նաւակայք , Լսարանը ուր գունդագունդ պիտի վազեն , պիտի ապաստանին անեղամունչ փոթորիկներէ ճողոպրածները , հարստահարող բռնակալներու գարշելի լուծին տակ հեծող թշուառ զոհերը . . . : Ժամադրավայրն է Լսարանը , ուր խառնիխուռն կուգան զիրար կը գտնեն հեռաստանէն փախչողները : Գթառատ դարմանատունն է ան , ուր կը դարմանուին խանգարուած իմացականութիւնները , կը բժշկուին մտքի ու սրտի ջլախտաւորները :

Երբ քաղաք մ'ունի իր Լսարան-Բնթերցատունը , ասի զեղեցիկ նշան մ'է թէ՛ ողջ է այդ քաղաքը , շարժման մէջ է , յաճախ ալիքներու ու ժայռերու բաղխելով :

Ասի նշան է թէ կեանքը մեռած չէ հոն :

Որոքանը կ'օրօրէ մանկութիւնը , եկեղեցին կը ներշնչէ , բնութիւնը՝ կը կազմէ , վարժարանը՝ կը կրթէ . իսկ Լսարանը՝ մարդկութեան համար՝ ամէն բան է . կը ներշնչէ , կը կազմէ , կը կրթէ :

Լսարանը անհունութիւնն է նոյն իսկ , ուր կը տարուբերի մարդուն էութիւնը , ու հոն կը կայանայ հոգիին ու անհունին միջեւ կապ մը , քաղցր ու ներդաշնակ , որմէ կախեալ է մարդկային սեռին բովանդակ երջանկութիւնը :

Պաշտելի չէ՞ արդարեւ Լսարան-Բնթերցատունը :

« Նոր-Օր » :

(Բարեփոխում)



Լսարանի վարագոյրը փակուած է...
Անհուն գոհունակութիւն մը կը զգանք՝ աննը,
չան բայց ծանր դործ մը ի գլուխ հանուած տեսնե-
լով :

Ու ակամայ կ'ընդհատենք պատասխաններու
չարքը, մեր ջերմ շնորհակալեքը յայտնելով այն
ազնիւ ազգայիններուն՝ որոնք իրենց համակրանքի
բուն արտայայտութիւններով քաջալերեցին գրքոյ-
կիս հրատարակութիւնը :

Պարտք կը սեպենք շնորհակալութեան բաժին
մ'ալ հանել Պ. Ե. Թորոսեանի, որ հակառակ իր
Տպարանի ազգատուութեան՝ ջանքը չի խնայեց անոր
խնամքոտ ապագրութեանը համար :

Վերջացնելէ առաջ՝ երջանիկ տարի մը կը մաղ-
թենք մեր համակիր ընթերցողներուն, անպարտա-
ճանաչ հայերու հասցէին ալ գոչելով Գամառ-Քաթի-
պաի հետ .

«Եթէ իր գոյութիւնէն խեր չունի Հայաստան,
Թքեր եմ քու գոյութեանդ ալ վրայ...»

Գրական Մասնագիտ
ԼՍՍՐԱՆ - ԸՆԹԵՐՑԱՍԱՆ



ԿԱԴԱՆԴՉԻՔ ԿՈՒՉԵՆՔ

« Հարց - Պատասխաններու » համար գին որոշուած
չէ :

Երէ Բնկերաքիւն հարուս ըլլար՝ պիտի ուզէի՞նք
հարիւրներով անկէ արի բաշխել ժողովուրդին :

Երբ ընթերցատէր հասարակութիւնը փոքրեւոր
արժանի գրեկ սոյն գրքոյկը, որուն համար ֆաւս նակիի
նոս գումար մը ծախսուած է, քող սայ ինչ որ իր սը-
սէն կը բխի :

Բնկերաքիւն անդամներուն տար կամ արեջի դա-
հեխան՝ իսկ պարզ և ունիւստներու տակ եւ ձիւնց կամ ա-
ւելի - դահեխան կադանդիկները պիտի հրատարակուին
« Արևառեկի » ով, ֆանի մ'ալիս վերջ :

Բարեւեր ազգայիններէն կը խնդրուի որ անուննին
եւ և ունիւստներէն ֆաւս սըր նշանակեն իրենց ներկայ-
ուած տեսիլն ձեռք :

Մեր յարգող հրատարակութեան հասոյթին կեար պի-
տի յսկ սոյն գրական մը յան սկիւն :

ԿԱԴԱՆԴՉԻՔ ԿՈՒՉԵՆՔ

Հասցէ

Cabinet de lecture arménien,
Boîte Postale 244
Le Caire (Egypte)

« ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ » Ձեռքի 4Ը ԾԱԽՈՒԻ
10 ԴԱՀԵԿԱՆԻ

«Ազգային գրադարան»



NL0223874

52.723